

ՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ

Երկու հազար քսան թվականի փետրվարի յոթին

քաղաք Երևան

Բնապահպանական հանրային դատարանը՝ Ն.Վարդանյան, Ի.Զարաֆյան, Հ. Խառատյան, Թ. Ենոքյան կազմով

Քարտուղարությամբ՝ Վ. Բուռնազյանի

Դիմումատու՝ «Հանրային իրազեկման և մոնիթորինգի կենտրոն» ՀԿ-ի նախագահ՝ Մարի Զաքրյանի

Պատասխանողի ներկայացուցիչ՝ Երևանի ավագանու «Իմ քայլը» խմբակցության քարտուղար Հասմիկ Խաչունցի/ մյուս գերատեսչությունները պատշաճ ծանուցվել են, սակայն չեն ներկայացել/

Դատարանը, դռնբաց դատական նիստում քննելով «Երևանի Դավմայի այգիների շարունակական զավթման վերաբերյալ» բնապահպանական հանրային գործն՝ ըստ Մարի Զաքրյանի դիմումի,

ՊԱՐԶԵՑ

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դավմայի այգիները հայտնի են մ.թ.ա. 7-րդ դարից, որտեղ առկա են պատմամշակութային բազմաթիվ կառույցներ՝ դամբարանախումբ /մ.թ.ա 2-1հազ./, ջրանցք, հնձաններ /19-րդ դար/, մառան /19-րդ դար/ և այլ կառույցներ, աճել են խաղողի և այլ բույսերի էնդեմիկ տեսակներ, առկա է հարուստ կենսաբազմազանություն: Խորհրդային տարիներին Դավմայի այգիների տարածքում գործել է չորս կոլտնտեսություն: 1991թ. հողային ռեֆորմի արդյունքում կոլտնտեսությունների հողերը սեփականաշնորհվել են, սակայն Դավմայի այգիների տարածքում գտնվող կոլտնտեսությունների հողերը սեփականության իրավունքով չեն փոխանցվել դրանց անդամներին, այլ 1800 հողօգտագործողի հետ կնքվել են վարձակալության պայմանագրեր: Տարիներ շարունակ հողօգտագործողները բարնխիզճ մշակել են

հողը, խնամել են եղած այգիները և հիմնել են նոր այգիներ, պարտաճանաչ վճարել են հողի, ջրի վարձը: Դալմայի այգիների հողօգտագործողները բազմիցս դիմել են Երևանի քաղաքապետարան՝ իրենց կողմից օգտագործվող հողատարածքների սեփականաշնորհման խնդրանքով, սակայն մշտապես մերժում են ստացել պատճառաբանությամբ, որ դա ընդհանուր տարածք է և սեփականաշնորհման ենթակա չէ: Նույն պահանջով դիմել են դատարան, սակայն, իրենց հայցերը նույնպես մերժվել են պատճառաբանությամբ, որ դա պատմամշակութային տարածք է և սեփականաշնորհման ենթակա չէ: Սակայն, 2001թ-ից ի վեր Դալմայի այգիների տարածքները ՀՀ կառավարության և Երևանի քաղաքապետարանի տարբեր որոշումներով սեփականության կամ օգտագործման իրավունքով տրամադրվել են այլ անձանց՝ խախտելով փաստացի հողօգտագործողների նախապատվության իրավունքը: Դալմայի այգու տարածքի մի մասն արդեն կառուցապատվել է /«Նոյ» թաղամաս, «Դալմա-Մոլ», Մոնթե Մելքոնյան փողոց և այլն/, մյուս մասն էլ հատկացվել է զվարճանքի կենտրոն հիմնելու և երիտասարդական բնակելի թաղամաս կառուցելու համար: Այդ հողհատկացումների արդյունքում իրական հողօգտագործողները զրկվել են իրենց հողամասերից, փակվել են իրենց հողամասեր մուտքի ճանապարհները, ջրագիծը լցվել է աղբով, և այգիները ջրագրկել են: Բազմաթիվ բողոքներից հետո հողօգտագործողների մի մասին սովել են տարբեր չափի փոխհատուցում, ինչը չի համապատասխանում ո՛չ այդ հողերի կադաստրային արժեքին, ո՛չ էլ հողօգտագործողների վնասներին: Հողօգտագործողների մի մասը փոխհատուցում չի ստացել, կրել է վնասներ, և այդ խնդիրը մինչև օրս չի լուծվում:

Դալմայի այգիները բացի պատմամշակութային հուշարձան լինելուց, ունեն նաև շատ կարևոր էկոլոգիական նշանակություն, մասնավորապես, կիսաանապատային գոտում գտնվող, մեկ միլիոնից ավելի բնակչություն ունեցող, տրանսպորտով և ձեռնարկություններով հագեցած Հայաստանի մայրաքաղաք Երևանի մթնոլորտային օդի մաքրության, կլիմայի բարենպաստ պայմանների ստեղծման, ջրային ռեսուրսների պահպանման, անտառային և կանաչ տարածքների ու կենսաբազմազանության պահպանման, մարդկանց առողջության համար: Այն ունի նաև շատ կարևոր սոցիալ-տնտեսական նշանակություն: Մասնավորապես, Դալմայի այգիները գրավիչ և շահութաբեր կլիմեն տուրիզմի, գյուղատնտեսության, գինեգործության զարգացման համար: Բացի այդ, երկար տարիներ 1800 ընտանիքի համար այն եղել է աշխատատեղ, ապրուստի և սննդի ապահովման միջոց:

Դալմայի այգիների ոչնչացումը և տարածքների կրճատումը հանգեցրել են.

- Երևան քաղաքի կլիմայի փոփոխությանը
- Երևան քաղաքի թթվածնի պաշարի նվազմանը
- մթնոլորտային օդի աղտոտմանը
- անտառային և կանաչ տարածքների ոչնչացմանը
- հողերի դեգրադացիայի, անապատացման նպաստմանը
- ջրերի հավասակշռության խախտմանը, ջրային ռեսուրսների կորստի և աղբակալմանը

- կենդանիների ապրելավայրերի և բույսերի աճելավայրերի վատթարացմանը և կորստին
- կենսաբազմազանության նվազմանը և կորստի
- պատմամշակութային օբյեկտների ոչնչացմանը
- մարդկանց առողջության վրա բացասական ազդեցությանը
- մարդկանց սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացմանը և աղքատության աճին
- տնտեսական աճի նվազմանը:

Դալմայի այգիների էկոլոգիական, պատմամշակութային, տնտեսական, սոցիալական, գիտական նշանակությունով է պայմանավորված սույն գործով դիմումատուի դիմումի քննությունը Բնապահպանական հանրային դատարանի կողմից:

## **2. Դիմումատուի փաստարկները և իրավական դիրքորոշումը**

Դիմումատու՝ Մ.Չաքրյանը, դիմելով Դատարան, ներկայացրել է հետևյալ փաստերը և հիմնավորումները.

1991 թվականին Հայաստանի ամբողջ տարածքում տեղի ունեցավ Հողային Ռեֆորմ, կոլտնտեսությունների հողերի մասնավորեցում, և դրանք որպես սեփականություն անժամկետ և անհատույց տրվեցին կոլտնտեսականներին: Դալմայի այգիների տարածքում մինչ այդ գործել էր 4 կոլտնտեսություն, սակայն այս կոլտնտեսությունների հողերը չենթարկվեցին մասնավորեցման, չնայած ՀՀ Գերագույն Խորհրդի 04.02.1991թ. «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքը կիրարկելու մասին» Ն-0252-Մ Որոշման 9-րդ և 10-րդ կետերի համաձայն հողերի մասնավորեցում չէր նախատեսվում միայն 2 դեպքում, երբ՝ 1. հաշվարկված հողաբաժնի փոքր լինելու պատճառով տեխնոլոգիապես հնարավոր չէր գյուղացիական առանձին տնտեսություն վարելը և պետք էր կիրառել հողի սեփականության կոլեկտիվ ձևը, և 2. Հանրապետության սահմանամերձ շրջանների առանձին բնակավայրերում:

Նախկին կոլտնտեսականներին հնարավորություն տրվեց շարունակել մշակել այգիները վարձակալության հիմունքներով: Տարիներ շարունակ հողօգտագործողները բարեխիղճ մշակել են հողերը, վճարել համապատասխան վարձավճարները հողի, օգտագործված ջրի և այլնի համար: Նրանցից որոշները փոքրիկ այգեգործական տնակներ են կառուցել այգու տարածքում, քանի որ այգու մշակման ընթացքում ստիպված էին ժամանակավոր բնակվել, կամ գիշերել այնտեղ: Այդ տարիներին հողօգտագործողներից շատերը դիմել են քաղաքապետարան իրենց կողմից տիրապետվող հողը սեփականաշնորհելու համար, սակայն ստացել են

մերժում, օրինակ՝ Երևանի քաղաքապետարանի 13.09.2006թ. թիվ 18-06/1-Է-19 պատասխանում որպես մերժման հիմք նշված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ կետը, այն է. «Արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք՝ 6) բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողեր են (հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, գետափեր, զբոսայգիներ, պուրակներ, այգիներ, լողափեր և ընդհանուր օգտագործման այլ տարածքներ)»:

Փորձելով օգտվել հողային օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ կետով և 72-րդ հոդվածով իրենց ընձեռնված՝ ձեռքբերման վաղեմության ուժի հնարավորությունից՝ այն է. «քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իրենց իրավունքների իրավաբանական ձևակերպման օգտվում են պետության կամ համայնքի հողերից, ունեն այդ հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունք», նրանք փորձել են ձեռքբերել սեփականության իրավունք նաև դատական կարգով, սակայն ստացել են մերժում հիմնականում այն պատճառաբանությամբ, որ Դալմայի այգիները համարվում են պատմամշակութային հուշարձան և ենթակա չեն սեփականաշնորհման (օրինակ՝ դատական Գործ N2-442, 2001թ. Դատավոր Գ. Կարախանյան): Այս հանգամանքները սակայն, հետագայում խոչընդոտ չեն հանդիսացել այգիների հենց այդ նույն տարածքները այլոց սեփականության իրավունքով տրամադրելու համար: Այսինքն, Դալմայի այգեգործների՝ իրական տերերի, պարագայում դատարանները կայացրել են անարդար վճիռներ. հղում են արել ՀՀ օրենքների այն կետերին, որոնք, չգիտես ինչու, մյուսների վրա չեն տարածվել:

Դալմայի այգիների նոր սեփականատերերը, Երևանի քաղաքապետարանի հովանավորությամբ և կամ համագործակցությամբ, 2002-2005թթ. և առ այսօր էլ խոչընդոտել են այգեգործների մուտքը դեպի այգիների տարածք, կտրել են ռոտզման ջուրը, վախեցրել են, հողագործներից ոմանք, որոնք կարողացել են լեզու գտնել նոր սեփականատերերի կամ հարևան հողատարածքի տիրոջ հետ, շարունակել են մշակել այն, կամ այգուն մոտենալու այլ ուղի են ստեղծել, դուլլերով ջրել ու խնամել են տարածքը, հողից հսկայական քարեր են հանել ձեռքով նույնիսկ տարեց կանայք և շարունակել կանաչապատման աշխատանքները: Առ այսօր ասելով՝ նկատի ունեմ այն հանգամանքը, որ Վերածնունդ Երիտասարդական ավանի շինարարության ժամանակ՝ 2019թ. աշնանը, ռոտզման ջրի ջրանցքը լցվել է շինարարական աղբով, հատված բերքատու ծառերի բերքով ու ճյուղերով, և թե ինչպե՞ս կամ ո՞ւմ կողմից է այն մաքրվելու և ինչպե՞ս է ապահովվելու ռոտզման ջրի հոսքը դեպի դեռևս հատ ու կենտ մնացած կանաչ կղզյակ-այգիները, խիստ մտահոգիչ է այգեգործների համար:

Ինչ վերաբերում է Դալմայի այգիների տարածքի սեփականաշնորհման գործընթացի մույթ անկյուններին. մինչ 2001թ. Դալմայի այգիները՝ որպես տեղական նշանակության հուշարձան, ընդգրկված են եղել հայկական ՄՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության կողմից 1990թ. հունվարի 24-ին հաստատված ցուցակում: 2004թ. հոկտեմբերի 7-ին N1616-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում որպես այգեպուրակային ժառանգության մաս կամ բնության հուշարձան չեն ընդգրկվել: Այս մասին «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ-ին ուղղված իր պատասխան գրությամբ հաստատել է նաև ԿԳՄՍ նախարարությունը: Մատնանշեմ, որ սեփականաշնորհման գործընթացը տեղի է ունեցել հենց 2001-2004թթ. և դրան հոջորդող տարիների ընթացքում, երբ միտումնավոր տարածքը դուրս է հանվել հուշարձանի կարգավիճակից:

Դալմայի այգիների նկատմամբ մեկ այլ հանցագործություն տեղի է ունեցել կառավարության 2003թ. մարտի 27-ի «Երևանի Դալմայի այգիների պահպանման ենթակա հողերի սահմանների և նպատակային նշանակության փոփոխության մասին» հ. 1941-Ա որոշմամբ, երբ, ըստ տպագրված փաստաթղթի, կառավարության որոշման ընդունման ամսաթիվ գրված է 2003 թվականը, սակայն ՀՀ նախագահի, անգամ ՀՀ վարչապետի կողմից այն ստորագրվել է ուղիղ մեկ տարի անց՝ 2004 թվականին:

Այս որոշումը կայացվել է՝ խախտելով Հայաստանի կողմից վավերացված Օրհուսի կոնվենցիան, ինչպես նաև ՀՀ մի շարք օրենքների պահանջներ: Որոշման կայացմանը պետք է նախորդեր հանրությանը լայն իրազեկումը և հատկապես Դալմայի այգեգործներին, այգիների իրական տերերին ու պոտենցիալ սեփականատերերին իրազեկումը, հանրային քննարկումները, որոնք չեն արվել: Նշեմ, որ այս առնչությամբ դեռ 2004 թվականի սեպտեմբերին, «Թրանսփարենսի ինթերնեշնլ» կազմակերպությունը, «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոնը» և «Հայկական բուսաբանական ընկերություն» ՀԿ-ն համատեղ դիմել են Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտե, որն էլ 2004, 2006 թվականներին քննել, իսկ 2008 թվականին Հայաստանի առնչությամբ կայացրել է թիվ I/7 որոշումը՝ ճանաչելով ՀՀ կառավարության 1941-Ա որոշումը (դրան առնչվող մի քանի որոշում ևս) կոնվենցիային ոչ համապատասխան: Կոմիտեի որոշմամբ Հայաստանին ներկայացվել են սխալն ուղղելու/վերացնելու՝ առաջարկություններ, որոնք առ այսօր անտեսված են (տես՝ ECE/MP.PP/C.1/2006/2/Add.1; ECE/MP.PP/2008/5/Add.2 2April 2008; ECE/MP.PP/2008/L.8/Add.2 4 April 2008):

Դալմայի այգիների հողօգտագործողները տարիներ շարունակ պայքարել են; Նրանց առաջարկվել են փոխհատուցումներ, որոնք համապատասխան չեն եղել կորստին և իրական վնասներին, սակայն շատերն ստիպված համաձայնել և վերցրել

են տրված փոխհատուցումը: Նրանցից 12 հոգի սակայն դեռ չի ստացել փոխհատուցում, կամ ստացել է դրա մի մասը: Տարիներ շարունակ նրանք թակում են կառավարության և Երևանի քաղաքապետարանի դռները: Կառավարությունն ամեն անգամ նրանց դիմումները վերահասցեագրում է Երևանի քաղաքապետարանին, որի պատասխանը շահառուներին վաղուց հայտնի է: Բոլորովին վերջերս էլ Երևանի քաղաքապետարանը պատասխանել է, որ ինքը չի հանդիսանում Երևանի նախորդ քաղաքապետարանի իրավահաջորդը: Եվ դրանով հանդերձ, քաղաքացիներին պահում են արատավոր շրջապտույտի մեջ:

Փոխարենը Կառավարությանը հայտնելու, որ ինքն այլևս չի հանդիսանում նախորդ քաղաքապետարանների իրավահաջորդը և խնդրի լուծման համար և թող իրեն այլևս չուղարկեն հողօգտագործողների նամակները, թող Կառավարությունն ինքը որոշի այդ հարցը, միայն քաղաքացիներին է տեղեկացնում իր նոր կարգավիճակի մասին ու խնդիրն այդպես էլ մնում է չլուծված:

Վերոնշյալ 1941-Ա որոշմամբ Դավմայի այգիների 256 հա տարածք նախատեսվել էր դարձնել անտառային կատեգորիայի հող: Մեր բազում ջանքերը, պարզելու Դավմայի այգիների իրական տարածքի չափսերը, հաջողություն չեն ունեցել մինչ երեկ չէ առաջին օրը, երբ մենք ստացանք 2019թ. սեպտեմբերի 26-ին Կառավարությանն ուղղված և քաղաքապետարանին վերահասցեագրված մեր հարցման պատասխանը:

Մինչ այդ, մեր մի շարք հարցումներին ի պատասխան Երևանի քաղաքապետարանը տեղեկացրել էր, որ 228 հա տարածք հանդիսանում է, մեջբերում եմ. ««Հայանտառ» տնտեսության հող»: «Հայանտառ» ՊՈԱԿ-ը սակայն հերքում է այս փաստը՝ պնդելով, որ իր ենթակայության տակ Դավմայի այգիների տարածքում անտառային հող չկա: Մասնակցելով անտառի թեմայով տարբեր քննարկումների ու կոնֆերանսների, որտեղ ներկա են եղել նաև Շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչները, առիթ ենք ունեցել նրանց հարց ուղղելու, և նրանք ոչ մի անգամ չեն նշել Դավմայի այգիների տարածքը որպես անտառային՝ պնդելով, որ այնտեղ անտառային հող չկա: Ինչպես պարզել ենք Կադաստրի կոմիտեից, Դավմայի այգիների տարածքից ոչ մի հողակտոր պետական գրանցման չի ներկայացվել որպես անտառային հող: Ընդամենը երկու օր առաջ էլ քաղաքապետարանը գրությամբ տեղեկացրել է, որ 256 հա անտառային նշանակության հողերը 2009թ-ին կառավարության որոշմամբ անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել են Երևանի քաղաքային համայնքին: Այս հակասական տեղեկություններից թե որը կարող ենք հիմք ընդունել, դժվարանում եմ ասել:

Այսուհանդերձ, իբրև թե անտառային հող հանդիսացող 256 հա տարածքից 27,66 հա տարածք, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԱՐԿ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ կառավարության 2018թ.

հունվարի 11-ի թիվ 5-Ա որոշմամբ վարձակալության իրավունքով, 99 տարի ժամկետով հատկացվել է «Պարկ Գրուպ» ընկերությանը մանկական, երիտասարդական, ընտանեկան հանգստի և ժամանցի կենտրոն ստեղծելու նպատակով այն պարագայում, երբ այդ տարածքում կան պատմական նշանակություն ունեցող հուշարձաններ, ինչպես նաև տարածքը օգտագործվում է փաստացի հողօգտագործողների և վարձակալությամբ տնօրինողների կողմից, որոնց վարձակալական պայմանագրերը ուժի մեջ էին մինչև 2025-2028թթ-ները: Այս որոշումը, ինչպես նաև Դալմայի այգիների տարածքին առնչվող, այդ տարածքի հողերի օտարման վերաբերյալ կառավարության մյուս որոշումները հակասում են ինչպես ՀՀ մի շարք օրենքներին, այնպես էլ Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին: Մասնավորապես, առաջնահերթ հակասությունն սկնհայտ է «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայի հետ, քանի որ դեռևս նախնական փուլում չի ապահովվել հանրության լայն իրազեկում, նախագծերը չեն քննարկվել տարածքի շահառուների հետ, այլ կայացվել է Ա կատեգորիայի որոշում: Հաջորդիվ, կառավարության որոշումները հակասում են «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիային, Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիային, ինչպես նաև «Հնագիտական ժառանգության պահպանության մասին» եվրոպական և «Մշակույթի և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիաներին, օրինակ, որ «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայով կողմը պետք է ապահովի նաև ագրոկենսաբազմազանության ավանդական տեսակների պահպանությունը և դրանց մշակման ավանդույթները, իսկ Դալմայի այգիների տարածքում հայտնաբերվել են սեղանի և գինու խաղողի մի շարք ավանդական տեսակների կենսաձևեր և կլոններ: Տարածքում հնագետների պնդմամբ կան, ցավոք մեծ մասն արդեն չկան, խողողագործության 3000-ամյա լանդշաֆտներ, որոնք Հայաստանի ավանդական խաղողագործության, գինեգործության հազարամյա պատմության վկայությունն են:

Բացի այդ, «Պարկ Գրուպ» ընկերությունը տարածքի նախագծի ՇՄԱԳ փաստաթուղթը փորձաքննության է ներկայացրել 1 տարի անց, մինչդեռ հենց այս փաստաթուղթը պետք է հիմք հանդիսանար հողատարածքի հատկացման համար: Այսուհանդերձ, այս և բազում այլ հանգամանքներ, որոնք թվարկելու համար շատ երկար ժամանակ է պետք, խոչընդոտ չեն հանդիսացել, որպեսզի ընկերությունը 2019թ. հունվարի 9-ին ստանա պետական փորձաքննական դրական եզրակացություն:

2019թ. նոյեմբերի 15-ին «Պարկ գրուպ» ընկերության շինարարության ընթացքում քանդվել է 17-րդ դարին վերագրվող գինու հնձան, որի մասին ես ահագանգել եմ սոցիալական ցանցի իմ անձնական էջում, և որին արձագանքել են ինչպես ՀՀ ԱԺ պատգամավորներ, Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ,

ԿԳՄՍ նախարարությունն, այնպես էլ բազում ԶԼՄ-ներ: Այս փաստը հիմք հանդիսացավ, որպեսզի կազմվի արշավախումբ, որն էլ նույնների 18-21 ժամանակահատվածում ուսումնասիրություններ է իրականացրել Դալմայի այգիների տարածքում և հայտնաբերել Ք.ա. 2-1 հազարամյակի դամբանաթումբ, 19-րդ դ 5 (հինգ) հնձան և նույն դարի մառան: Հուշարձանախմբի, դրանում առկա ենթակառուցվածքների հաշվառման փաստաթղթերի քարտեզագրական նյութում դրանց զբաղեցրած տարածքների սահմանները ճշտելու նպատակով ԿԳՄՍ նախարարի կողմից հանձնարարական է տրվել «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նորահայտ հուշարձանների հետագա պահպանման միջոցառումներն ապահովելու համար: Հարկ եմ համարում նշել, որ գիտնականների, Դալմայի տարածքի տարբեր հետազոտողների պնդմամբ, մի քանի տարի առաջ այստեղ հաշվվել է մինչև 40 գինու հնձան: Բացի այդ, իմ ձեռքի տակ է «Հայկական խաղող և զինի» ծավալուն աշխատությունը, որտեղ կան Դալմայի տարածքի 16-17-րդ դդ հնձանների լուսանկարներ, մինչդեռ արշավախումբը հայտնաբերել է միայն 19-րդ դարին թվագրվող 5 հնձան ու մի մառան: Դեպքի առնչությամբ մեր կազմակերպությունը հարցում է արել ՀՀ դատախազությանը, թե արդյոք նրանք ուսումնասիրել են ԶԼՄ-ների հրապարակումները և արդյո՞ք քրեական գործ է հարուցվել: Եվ ստացել ենք պատասխան, որ մեր նամակի, այլ ոչ թե ԶԼՄ-ների հրապարակումների, կամ Երևանի քաղաքապետարանի համապատասխան մարմինների արձանագրությունների հիման վրա, հարուցվել է քրեական գործ:

Ինչպես նշեցի, մեզ մինչ երկու օր առաջ, չէր հաջողվել պետական կառույցներից և հատկապես, որպես ինֆորմացիայի հիմնական տիրապետող, Երևանի քաղաքապետարանից ստանալ Դալմայի այգիների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն: Ինչի համար մենք դիմել էինք «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին: Վերջինիս հարցմանն ի պատասխան, Երևանի քաղաքապետարանը պատասխանել է, որ. «Երևան քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների կոմպլեքսային պահպանության և օգտագործման» նախագծով (Երքաղխորհրդի կողմից 1991թ. ապրիլի 17-ին հաստատված հ6/18 որոշմամբ), մոտ 750 հա մակերես կազմող սահմաններով առանձնացված է եղել «Դալմայի այգիներ-Սարդարի այգի» գոտի, սակայն սահմանները փոփոխվել են, քանի որ հետագայում այդ որոշումը (նաև նախագիծը) Երևանի քաղաքապետի 2002թ. օգոստոսի 30-ի հ 1137 որոշմամբ ճանաչվել է ուժը կորցրած: Նույն այս պատասխան գրության մեջ նաև նշված է, որ 2003թ. «Երևանի Դալմայի այգիների պահպանման ենթակա հողերի սահմանների և նպատակային նշանակության փոփոխության մասին» հ. 1941 –Ա որոշման հիման վրա Դալմայի այգիների սահմանները ամրագրվել են 256 հա մակերեսով և տեղայնացվել է Երևանի քաղաքապետի 2004թ. մայիսի 25-ի հ.918-Ա որոշմամբ, ու թողարկվել է 2007թ գլխավոր հատակագիծը (սեպտեմբերի 28-ի հ. 4103-2007թ.): «Ծիծեռնակաբերդի խճուղուն հարող տարածքում կառուցապատման թույլտվություններ են տրամադրվել՝ հիմք ընդունելով «Երևան



քաղաքի գլխավոր հատակագիծը» (2005-2020թթ., հաստատված կառավարության 2005թ. դեկտեմբերի 15-ի հ. 2330-Ն որոշմամբ): Գրության մեջ նաև մատնանշվել է, որ «Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը անցել է անհրաժեշտ համալիր փորձաքննություն, այդ թվում նաև բնապահպանական»: Այստեղ հավելվել, որ հենց այս ժամանակ, հիմնավորելով, որ, իբր, Երևան քաղաքի Դավնայի այգիների տարածքի հողերում կան ծանր մետաղներ, հետևապես դրանք պիտանի չեն այգեգործության համար, Դավնայի այգիների հողերի գյուղատնտեսական նշանակությունը փոխվել է, հավաստաբար հետագայում դրանք օտարելու մղումով: Մեր բազմաչարչար հարցմանն ի պատասխան քաղաքապետարանի գրության մեջ նշված է, որ Երևանի հատակագծի համաձայն. «գոտում առկա են հնագիտական ռեսուրսներ, հինգ-հազարամյա գործող ջրանցք, խաղողագործության նախկին վայրեր և այլն»: Սակայն այս հանգամանքը կրկին խոչընդոտ չի հանդիսացել, որ տարածքը պահպանության փոխարեն դրվի կառուցապատման տակ:

Ավելին, ինչպես «Պարկ Գրուպ» ընկերությունն, այնպես էլ «ԵՊՀ շրջանավարտների միավորում» ՀԿ-ն, իրենց շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փաստաթղթերում ներկայացրել են կեղծ տվյալներ, թե իբրև տարածքը ամայի է, բուսազուրկ, ծառազուրկ, կառույցներից զուրկ, հուշարձաններ չեն հայտնաբերվել և Շրջակա միջավայրի նախարարը, հիմնվելով այս կեղծ տվյալների վրա, հաշվի չառնելով Երևանի հատակագիծը, որտեղ փաստորեն նշվում է, որ տարածքում առկա են հնագիտական ռեսուրսներ, ստորագրել է փորձաքննական դրական եզրակացությունը՝ վտանգելով ոչ միայն փաստացի այգիներն ու կենսազանգվածը, այլև հազարամյակների պատմությունն ունեցող, աշխարհում բացառիկ խաղողագործական լանդշաֆտները, հնագիտական մյուս արժեքներն ու միջնադարյան շինությունները:

Ավելին, այս ամենի արդյունքում տուժել են նաև քաղաքացիները, նրանցից շատերին, խաբելով ու համոզելով, նրանց վրա ճնշում գործադրելով, հավաստիացրել են, թե իրենց կողմից մշակվող այգին ընկել է «գենպլանի» տակ և եթե իրենք չհամաձայնեն առաջարկվող փոխհատուցմանը, միննույնն է՝ «կարմիր բերետավորները» իրենց դուրս կվոնդեն և կմնան ձեռնունայն: Դեռ կան հողօգտագործողներ, ովքեր չեն համաձայնել չնչին և ոչ համարժեք փոխհատուցմանը և շարունակում են մշակել, ապրել Դավնայի այգիների տարածքում ահ ու սարսափի մթնոլորտում, քանի որ ամանորյա տոների օրերին և այս օրերին քանդվում են նրանց կամ նրանց հարևանների շինությունները, գոմերը, այգիները՝ ուժի գործադրմամբ:

Այսպիսով, կարծում եմ, որ Դավնայի այգիների հետևողականորեն կատարվող ոչնչացումը իրականացվել է նախապես պլանավորված սխեմայով: Եվ ցավալի է, որ այս գործընթացը շարունակվում է նաև այսօր, և ակնառու են կոռուպցիոն դրսևորումները, ներկայացված կեղծ տվյալների հանգամանքը, երբ հասարակական մի շարք կազմակերպություններ և Հանրային խորհրդի բնապահպանական հանձնաժողովը Դավնայի այգիների տարածքում շինարարության կասեցման

պահանջ են ներկայացրել ՀՀ կառավարությանը, Երևանի քաղաքապետարանին ու դատախազությանը:

Սա ոտնձգություն է ինչպես Հայաստանի պատմության, բնապատմական ժառանգության, ագրոկենսաբազմազանության, Երևանի կանաչ տարածքների, այնպես էլ հանրության կանաչ իրավունքների նկատմամբ և սոցիալական անարդարության վառ օրինակ է:

### **3. Տուժողների վկայությունները, մասնագետների և պատասխանատուների էությունները**

- **Ռուզաննա Ղազարյան /տուժող, տուժողների ներկայացուցիչ՝ «Դալմա-Սոնա» հիմնադրամի ՀԽ նախագահ/**

Մենք հիմա դատավարությունն անում ենք «Հողված 3»-ում: Երևի նախաինսամությունն է այդպես որոշել, որ մենք հենց այս անվան տանիքի տակ հանրային դատավարությունն անենք: Սահմանադրության 3 հոդվածն են նկատի ունեցել՝ ակումբի անունը դնելիս. «Մեր երկրում Մարդը Բարձրագույն արժեք է»: Դալմայի հողօգտագործողները, ցավոք, 1991թ-ից սկսած դա բոլորովին չեն զգացել: Այ, հակառակը, մշտապես՝ ամառ-ձմեռ, արդեն 17 տարի, զգացել են իրենց մաշկի վրա: Անկախության տարիներին Հայաստանում տեղի ունեցած ԲՈԼՈՐ իշխանափոխությունները և քաղաքապետափոխությունները՝ բոլորը, Ի ՎՆԱՍ Դալմայի հողօգտագործողների եղան:

-1991-92թթ. ասացին՝ այգիները հուշարձան են, չտվեցին ի սեփականություն: Կա նույնիսկ դատարանի վճիռ, որտեղ հստակ գրված է, որ հուշարձան լինելու պատճառով հողօգտագործողների հայրը՝ իրենց հողատարածքները իրենց սեփականություն ճանաչելու մասին, մերժվել է /Գործ N 2-442; 2001թ., դատավոր՝ Գ. Կարախանյան/: Մեկ այլ դեպքում մերժել են նաև Հողային օրենսգրքի 60 հոդվածի հիմքով /Երևանի քաղաքապետարանի պատասխան գրությունը հողօգտագործող Վահագն Էլբակյանին, N18-06/1-Է-19, 13.09.2006թ./: Բայց հենց այդ նույն տարածքը, արտոնյալ պայմաններով, առանց ռեալ ներդրման, նույն հողատարածքի գրավադրման իրավունքով, օլիգարխին 99 տարով տրամադրելիս, այդ հողվածը մոռացել են: Մոռացել են անգամ այն, որ այդ տարածքն արդեն իսկ մինչև 2025 թվականը վարձակալության պայմանագրով տրամադրված է Վահագն Էլբակյանին: Հողօգտագործողների՝ բոլորի պայմանագրերն էլ ՀՀ կառավարության 2003թ. 1941-Ս որոշման ընդունման պահին եղել են գործողության մեջ, հողօգտագործողները բոլորն էլ իրենց պայմանագրերի համաձայն պետությանը մուծել են հողի և ոռոգման ջրի վարձերը:

2003-2004թթ-ին՝ առանց նախապես՝ մեկ տարի առաջ, անհատապես, ԳՐԱՎՈՐ տեղեկացվելու, առանց հողօգտագործողների գիտության և համաձայնության, առանց նախապես իրենց հասանելիք՝ արդարացի ու լիարժեք փոխհատուցման, և համարժեք այլ հողամասի տրամադրման /ինչը՝ ՀՀ օրենսդրության պահանջ է/, միանգամից գարնան կարկուտի նման, իրենց հողամասերում եղած ժամանակ /նոր հողատերերի հորդ ու բորդից, դատական սպառնալիքներից, ոստիկաններից/ իմացան, որ այդ հողատարածքները, որ իրենք արդեն 10 տարուց ավելի մշակել, քափ ու քրտինքով ջրել, բեջարել, բերրի հող են դարձրել, դրանով կերակրել են իրենց ընտանիքները /և ոչ միայն իրենց/, -ՊԱՐԶՎՈՒՄ Է, այլևս իրենցը չէ ՀՀ կառավարության 1941-Ա անօրինական որոշմամբ:

*Ի դեպ, որոշումն օրենքի տեսակետից էլ՝ արսուրդ է. ՀՀ կառավարությունն այն ընդունել է 2003-ին, /և այդ թվականից էլ՝ քաղաքապետարանն սկսել է հողատարածքներ բաշխել օլիգարխների, անօրինական աճուրդով կամ առանց աճուրդի, նվիրելով կամ ուղղակի վաճառքով, «Փյունիկ» ընկերությանն էլ /ըստ լուրերի՝ Սաշիկ Սարգսյանինն էր/՝ օրինակ՝ տվել են **անհատուց ՄՇՏԱԿԱՆ օգտագործման իրավունքով** /Երևանի քաղաքապետի որոշում՝ 1376-Ա, .25.06.2003թ.՝ կառավարության 12.04.2001թ. հ. 286 որոշմա հիման վրա/:*

*Բայց այդ, 1941-Ա որոշումը՝ ՀՀ վարչապետն ու նախագահը ստորագրել են ուղիղ մեկ տարի հետո: /Նման բան այլ տեղ էլ չեք գտնի:/*

*Այս մասին, ես՝ ինքս, ՀՀ ԱԺ ամբիոնից 07.10.2019թ. հայտարարեցի, որպեսզի դատախազությունը քննի և պարզի այս անօրինականության բուն պատճառները:*

ՀՀ կառավարության ընդունած 1991թ. մարտի 5-ի N166 որոշումն ասում էր. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հատկացված հողամասերը պետական կարիքների համար կարող են հետ վերցվել միայն, երբ այդ քաղաքացիներին իրենց համաձայնությամբ այլ, համարժեք հողամաս է հատկացվում» (որոշմամբ հաստատված կանոնադրության 3-րդ կետ): Ոչ մի պետական ակտով առ այսօր այդպես էլ չի հաստատվել կամ նշվել, որ Դալմայի այգիները վարձակալներից վերցնում են պետական կարիքների համար:

ՀՀ Հողային օրենսգրքի 52.4 հոդվածը հստակորեն սահմանում է, որ «մինչև 1999թ. մայիսի 6-ը հողամասերի նկատմամբ իրավունքների վերաբերյալ սահմանված կարգով տրված, ձեռք բերված փաստաթղթերն ունեն իրավաբանական ուժ, վերագրանցման ենթակա չեն և հանդիսանում են հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ գործարքներ կատարելու համար»:

2003թ-ին բացարձակապես անտեսվեց հողօգտագործողների նախապատվության իրավունքը: Նրանք ստիպված սկսեցին պայքարել իրենց

իրավունքների համար բոլոր հնարավոր ձևերով՝ ակցիաներ, բողոքներ, հավաքներ, դիմումներ: Դիմեցին Օրհուսի համապատասխանության կոմիտեին, Կոմիտեն 2004, 2006, 2008-ին հաստատեց, որ ՀՀ կառավարությունը Դալմայի այգիների առնչությամբ մի շարք /5/ որոշումներ՝ 1941-Ա-ի գլխավորությամբ, 2003-2004թ-ին ընդունել է Օրհուսի կոնվենցիայի մի քանի դրույթների խախտմամբ և այդ մասին հանձնարարականներ է ուղարկել ՀՀ կառավարությանը: Այդ հանձնարարականների գործնական մասին վերաբերող կետերն առ այսօր ՀՀ-ն չի կատարել: ՀՀ բոլոր ղեկավար մարմիններին ուղղված դիմումներում այդ մասին նշվել է, բանավոր ասվել է: Ցավոք, գրավոր պատասխան չի եղել, իսկ բանավորին ի պատասխան լսել են «Օրհուսն ո՞վ է» հարցը:

Մինչև 2009 թ-ն ընդհանրապես փոխհատուցման մասին ՀՀ ղեկավարները լսել անգամ չէին ուզում, թեև Պաշտպանության նախարարությունը 50-ից ավելի հողօգտագործողներից վերցրած հողերի դիմաց հողօգտագործողներին մինչ այդ արդեն վճարել էր հենց պետական բյուջեից: Ի վերջո, ՀՀ նախագահի նստավայրի մոտ ամենօրյա ակցիաների շնորհիվ 2009թ. դեկտեմբերի վերջերին ՀՀ նախագահը խոստացավ, որ կհանձնարարի Երևանի քաղաքապետին կարգավորել մեր փոխհատուցման խնդիրը:

Ի դեպ՝ հողօգտագործողների 15-ամյա պայքարից, բողոքի ակցիաներից /<https://www.ecolur.org/hy/news/cities/--/2796/>; <https://www.azatutyun.am/a/24419303.html>; <https://www.ecolur.org/hy/news/cities/---/2100/> և այլն/, դիմում բողոքներից ակամա օգտվեցին /եթե դա կարելի է այդպես համարել/ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան մոտակայքից /Իսակովի պողոտա/ մինչև Լենինգրադյան և Աթենքի փողոցների հատման վայրը կառուցվող մայրուղու /ներկայիս Մոնթե Մելքոնյան փողոց/ տակ ընկնող Դալմայի այգիների հատվածի հողօգտագործողները, ում համապատասխան կառույցները, առանց բողոքի ցույցերի հասցնելու, տվեցին փոխհատուցում: Դրանից հետո որոշ աշխատանքներ տարվեցին: Նույնիսկ Կարեն Կարապետյանի օրոք հստակ հայտարարվեց /ԶԼՄ-ներում այդ մասին կա գրված/, որ բոլորին փոխհատուցում կտրվի այն էլ մեկ միասնական սակագնով, 1քմ-ի համար՝ 10 դոլար:

Որոշների փոխհատուցումն սկսեցին տալ, սակայն տարատեսակ արժեքով, եղել է, որ 1 դոլարով են փոխհատուցել, եղել է 2, եղել է 3 կամ 5 դոլար: Կառավարության որոշումներ կան, որտեղ Դալմայի այգիների մեկ քառակուսի մետրի արժեքը գնահատվել է **20 ԱՄՆ դոլարից** ոչ պակաս /11.11.2003թ. հ.1281-Ա/, նույնիսկ **40 ԱՄՆ** դոլար /18.03.2004թ. հ.345-Ն/:

2011թ-ին, ըստ ԶԼՄ-ների, 151 հոգուց մնացել էին՝ 48-ը /տե՛ս <https://www.facebook.com/groups/2361962947405483/permalink/2454107881524322/>/: Անգամ համայնքային հողերի դիմաց որոշներին տրվեց փոխհատուցում /փաստի

օրինակ՝ Երևանի Քաղաքապետարանի 29.08.2012թ. հ.07/Ս-3970 գրությունը՝ հողօգտագործող Ռինա Սահակյանին: Պաշտպանության նախարարության բյուջեից մոտ 50 հողօգտագործողի նույնպես վճարվել է, բնականաբար, ՀՀ պետական բյուջեից, վարձակալած հողերի դիմաց: Հետո նորից քաղաքապետ փոխվեց, սկսեցինք նորին բացատրել ամբողջ իրավիճակը, մի քիչ էլ սա տվեց փոխհատուցում: Ի վերջո մնացինք 12 հոգի, որոնց բոլոր դիմումներին /ընդհանուր, կամ անհատական/ քաղաքապետարանը նույն պատասխանը համակարգչից տպում, ստորագրում և ուղարկում էր մեզ, իբր՝ հետևողականորեն աշխատանքներ են տանում՝ մեր փոխհատուցման գործընթացը բարեհաջող ավարտելու ուղղությամբ:

2014թ-ի դեկտեմբերի վերջին նիստին, մեր խնդրանքով, Երևանի ավագանու անդամ տիկին Ա. Բախշյանը մեր հարցը բարձրացրեց: Տ. Մարգարյանը նույն խոստումը տվեց: Ավաղ: Հետո նոր քաղաքապետ եղավ: Հիմա նոր քաղաքապետին ենք փորձում իրավիճակն անձամբ ներկայացնել, սակայն ոչ մի կերպ չի հաջողվում: Նորերն ասում են, մենք նախորդների իրավահաջորդը չենք /օրինակ՝ քաղաքապետարանի 11.11.2019թ. հ.071Գ-7822 գրություն, Մարգիս Գրիգորյանին ուղղված/, մենք ձեզ փոխհատուցում չունենք տալու: Վկայակոչում են իրավական հիմքեր, նոր որոշումներ, որ իրենք նախորդի գործը շարունակելու իրավասություն չունեն: Բայց այդ մասին միայն մեզ են ասում, մեզ գրավոր գրում, մերժում են, իսկ կառավարությանը երևի ամաչում են՝ ասեն, այլապես՝ կառավարությանը հասցեագրած մեր բոլոր դիմումների պատասխանը քաղաքապետարանից չենք ստանա:

Սկզբնապես բազմաթիվ օրենքներ խախտելուց հետո մեր հանդեպ հիմա էլ խախտվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջն առ այն, որ եթե միևնույն փաստական հանգամանքերի դեպքում վարչական մարմինը որևէ կոնկրետ վերաբերմունք է ցուցաբերել /151 հողօգտագործողի գործերը նայել են, փոխհատուցման հարցեր են լուծել/, ապա իրավունք չունեն մնացած 12 հոգուս նկատմամբ այլ վերաբերմունք ցուցաբերել:

Մենք պահանջում ենք, նախ, **հարգել ՀՀ օրենքները**, որոնք սահմանում են մեր բազմաթիվ իրավունքերը մեր հողի նկատմամբ, օրինակ՝ նախապատվության իրավունք, նախապես առնվազն մեկ տարի առաջ տեղեկացում, համաձայնության ստացում, այլ համարժեք հողամասի հատկացում և այլն, **և երկրորդ, տալ մեզ մեր հասանելիք արդարացի, համարժեք, լրիվ /ոչ մասնակի/ փոխհատուցումը:**

Մենք արդեն հոգնել ենք 17 տարի անընդհատ, ամառ թե ձմեռ, ցրտին ու շոգին, անընդմեջ պայքարելուց: Հողօգտագործողներից ոմանք, ցավոք, մահացել են, ոմանք հիասթափվելով լքել են երկիրը, մնացածներն էլ արդեն ջահել չեն, կյանքները գնաց այս պայքարի մեջ: Էլ չենք խոսում այսքան թուղթ, գրիչ, թանաք, ծրար փչացնելուց ու

կոշիկ մաշելուց, դրանք արդեն մանրուք են անընդմեջ պայքարի մեջ մեր ՉԱՊԲԱԾ կյանքի դիմաց:

*Մեր պայքարի արդյունքում, իհարկե, որոշ առաջխաղացում եղավ՝ փոխհատուցում տվող ղեկավարների ուղեղում, մտածելակերպում, որովհետև նրանք հետագայում, ներքին կարգով փոխհատուցեցին Մոնթե Մելքոնյան մայրուղու կառուցապատման ժամանակ այդ կառույցի տակ ընկնող հողատածքների վարձակալներին և փաստացի օգտագործողներին: Բայց մեր 12-ի նկատմամբ սայլը տեղից չի շարժվում:*

Փոխհատուցման մասին հատուկ կետ մտցրեցին այն էլ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ մակարդակով՝ 11.01.2018թ. հ.5-Ա որոշման մեջ, որի 8.2.կետում հստակ նշել են, որ անգամ ՓԱՍՏԱՅԻ հողօգտագործողներին պետք է փոխհատուցում տրվի: Այլ հարց է, որ այստեղ էլ են օրինախախտումներ թույլ տրվել, ոչ բոլորին է փոխհատուցում տրվել, տրվածն էլ՝ տարբեր սակագներով են հաշվել, չի պահպանվել փոխհատուցման տրման օրենսդրական կարգը, առնվազն մեկ տարի առաջ՝ գրավոր տեղեկացնել, համաձայնություն ստանալ, գույքագրում անցկացնել և այլն, գումարների դեպոզիտար է նշանակվել «Երևան» հիմնադրամը /որը հիմա ԱԱԾ-ի ուշադրության կենտրոնում է/, և այլն: Այդուհանդերձ, 11.01.2018թ. հ.5-Ա որոշումը ևս հավաստում է այն էլ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ մակարդակով, որ մեր 12 հոգու նկատմամբ խախտվել և խախտվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը:

- **Ջուլետա Աղաջանյան /տուժող/**

1991թ. մեզ պայմանագրով մինչև 2004 թ. հող տվեցին: 2003թ., դեռ մեր ժամկետը չլրացած, ՀՀ կառավարության որոշմամբ մեր հողամասի մի մասը տվեցին Ռենկոյին, մյուս մասն էլ կեղծ աճուրդով վաճառեցին: Մենք աճուրդի հայտարարությունից տեղյակ չէինք, դա խախտում էր: 2003 թ. մարտին ՀՀ կառավարության որոշմամբ հողը տվել են Ռենկոյին, բայց հողերի նշանակության փոփոխության մասին Կառավարության որոշումը 2004 թ. է եղել: Մեր հողին տիրում էր նա, ով աճուրդի ժամանակ պարտվել էր: Երկու հոգի աճուրդին մասնակցել էր, ով պարտվել էր, նա էր՝ հողատերը: Թամանյանի ուղեկցմամբ ավտոմատներով եկան հողամաս, ասացին՝ պետք է դուրս գաք: Ասացի՝ փոխհատուցում տվեք, դուրս գանք: Ասացին՝ ինչ փոխհատուցում, մի քեզ փող ենք տվել: Դիմեցինք քաղաքապետարան, մեզ պատասխանեցին, որ ձեր պայմանագիրն անօրինական է, պետության կնիքով էր... Ասում են՝ դուք պետք է պետական գրանցում անեիք: Իսկ մինչև 1999 թ. բոլոր փաստաթղթերն օրինական են, գրանցման ենթակա չեն:

Մեր հարևանի հողատարածքները տվեցին ՀՀ պաշտպանության նախարարությանը: Պաշտպանության նախարարությունը պետբյուջեից փոխհատուցում տվեց այդ նույն կարգավիճակում գտնվող «անօրինական» հողատարածքների համար: Իսկ մեզ ասացին.-«ձեր պայմանագրերն անօրինական

են, մենք ձեզ տալու ոչինչ չունենք: Տվել ենք, մշակել եք, օգտվել եք»: Լրիվ չոր, ամառի այգի են տվել, մենք մշակել ենք, նորմալ այգի ենք դարձրել: Ծառ ենք տնկել շրջապատը, մեր աշխատանքը, քրտինքը գցել ենք ջուրը:

Երբ 2003թ. գրավոր դիմեցինք, որ տվեք մեր սեփական հողատարածքը մեզ, պատասխանեցին՝ ձեր դիմումը ետ վերցրեք: Քաղաքապետարանի աշխատակցի խոսքն էմ ասում.-«վերցրեք, սեփականաշնորհումն ընդհանուր է արվելու»: Այդտեղ էլ մեզ խաբեցին: Հետո, երբ արդեն ընթացքի մեջ ընկավ, փոխհատուցում տալն սկսեցին, 2005թ. նախագահ Քոչարյանը հայտարարեց.- «Էնա ով մայթերում էլ լոբի է ցանել, փոխհատուցում ստանալու է...»: Առ այսօր չենք ստացել:

Դալմայի այգիներ որ լսում էին, դիմում չէին վերցնում, իսկ 2008-ից հետո մեզ ասում են՝ աշխատանքներ են կատարում, որ փոխհատուցումը տան: Դրանից հետո ամեն տարի, տարվա մեջ 3-4 անգամ մենք դիմել ենք, որ տան փոխհատուցում, մեզ պատասխանել են, ներկայիս ներդրողների հետ բանակցություններ ենք վարում, որ ձեր փոխհատուցումը տանք: Մենք այդ ամենից ելնելով դատարան չենք դիմել... Արդեն գործընթացը լուծվում էր, մնացինք 12 հոգի, իշխանությունները փոխվեցին, և այսպես մնացինք կոտրած տաշտակի առջև:

### **Վահագն Էլբակյան /տուժող/**

1992թ. ինձ վարձակալական հիմունքներով հատկացրեցին 2500 քառակուսի մետր հողատարածք: Անմշակ, քարքարոտ: Զատիկյանն էր թաղապետը: Ինձ ասաց՝ կօգնենք, կմաքրես դաշտը: 2017թ. ասեցին՝ հողերը վերցնում ենք: Հետո եկավ մի անձնավորություն, ասաց, որ քաղաքապետարանի աշխատող է՝ Ղուկաս Հարությունյանը: Ասաց, թե մեր հողը պետական գերակա շահ է ճանաչվել, պետք է ազատենք: Ես հրաժարվեցի: Անցավ ժամանակ, կանչեցին քաղաքապետարան: Նորից հրաժարվեցի: Ասեցին, ուրեմն հենց այնպես կվերցնենք: 3500 քառակուսի մետր տարածք էր, մայր առուն երկու մասի էր բաժանում՝ 2500 և 1000 քառակուսի մետր: Ասացի, լավ, 2500-ը վերցրեք, էն 1000-ը մնա մեզ, մշակենք: Բա չէ, լրիվ պետք է հրաժարվեք: Ասեցի՝ չեմ հրաժարվի, մի դեպքում միայն, որ 2500 վերցնեք գոնե 10 դոլարով քառակուսի մետրը, կառույց կա, պոպոքի ծառեր կային... Անցավ մի քանի օր, ինձ տարան կադաստր, ակնոց չկար մոտս... Ղուկասն ասեց՝ արի, ստորագրի... Ասացի՝ պայմանս այն է, որ 2500 քառակուսի մետրը 10 դոլարով վերցնեք, ծառերի ու գոմի արժեքը նույնպես փոխհատուցեք: Մարդ ու կին եղտեղ էինք ապրում, անասուն էինք պահում: Նոր տարուն գնացի Ռուսաստան, այնտեղից հետ վերադարձա, ասացին, որ պարիսպ են քաշելու: Ղուկասն ասաց, որ քո հողի կեսն ենք վերցնելու: Պահանջեցի քարտեզը, 15-20 օր ուշացումով բերեց... 2018 թ, սկսեցին պարիսպ քաշել, տեսա՝ թեքվում են, ասացի էս ո՞ր եք թեքվում, իմ տարածքն ամբողջությամբ եք վերցնում, բա՝ չէ: Հասան իմ պարսպին, կնոջս քրոջ տղան մահացել էր, պետք է գնայի, շինարարներին խնդրեցի պարիսպս չքանդել: 10 օրից եկա, տեսա քանդել են պարիսպը, թեքվել մի 3մ ու իմ տարածքը վերցրել: Ու ոչ մի բան չկարողացա անել...

Ես էդ տարածքը մշակել եմ, էլի պատրաստ եմ մշակել ու պատրաստ եմ իրենց տված գումարը հետ վերադարձնել: 2500 քառ.մետր տարածքի համար 1քմ` 5 դոլարով են վարձատրել: Գումը, կացարանը քանդեցին, ինչ վեշ ունեինք, մինչև հիմա էլ էնտեղ է, բայց չենք կարող մտնել, պարիսպի մեջ է: Մի ամսից ավել է` թափած է...

Մի օր ինձ հաջողվեց թղթերը գտնել: Ես էդ Ղուկաս Հարությունյանին մեկ անգամ էի տեսել: Թղթեր կան, որ ես, իբր, իր հետ գործողություններ եմ արել, լիազորագիր եմ տվել այն դեպքում, որ ես այդ օրերին Ռուսաստանում եմ եղել: Լիազորագիր եմ տվել, իբր, որ Ղուկասն իմ անունից ինչ ուզի-անի իմ հողի հետ:

Դիմեցի Մալաթիա-Սեբաստիա քրեական բաժին: Մի ամիս անց գնացի, ասում են` ուղարկել են Շենգավիթի քննչական բաժին: Այնտեղ գնացի, հարցուփորձ արեցին: Մեկ ամիս անցավ, գնացի, ասում եմ` գործը քննեցե՞լ էք: Ասում են` ուղարկել ենք Կենտրոն-Նորք Մարաշ քննչական բաժին: Մեկ ամիս սպասեցի, գնացի Կենտրոն-Նորք Մարաշ քննչական բաժին: Այս դեկտեմբերին է եղել... Կենտրոն-Նորք Մարաշում ասում են` ուղարկել ենք Էրեբունի: Այնտեղ էլ ասեցին, թե ուզում են ուղարկել փորձաքննության: Ես ամբողջ տարածքս հետ եմ պահանջում ու թող վերականգնեն այն, ինչ քանդել են` 200 մ գծային պարիսպս:

- **Հայկ Գրիգորյան /վկա, «Կանաչ Հայաստան» ՀԿ-ի նախագահ/**

Դեկտեմբերին 25-26-ին ահազանգ ստացա, որ Դալմայի այգիների տարածքում բնակվող մարդկանց տարհանում են: Երբ հասա, տեսա, որ տան գույքն են հանել, բուլդոզերով բարձում են բեռնատար մեքենայի մեջ: Այնտեղ «Պարկ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչն էր, նաև ոստիկաններ կային, պահանջեցի փաստաթղթեր, բայց ցույց չտվեցին ոչինչ: Գումը չքանդեցին, մարդիկ մնացին անտուն: Հետո, պարզվում է, որ քանդել են նաև գումը, ձմռան կեսին անասուններին թողնելով անապաստան:

Իմ կոչն է դատարանին և պետական մարմիններին, որ այդ տարածքը որպես պատմամշակութային կենտրոն, որպես կանաչապատ տարածք, որպես Երևանի թոքերի մի մաս վերականգնվի, որովհետև այսօր մենք ամեն մի ծառի, ամեն մի թփի համար կռիվ ենք տալիս, որ թթվածին ունենանք:

Այլ երկրներ իրենց 200-300 տարվա պատմություն ունեցող քարի կտորը աչքի լույսի պես են պահում, իսկ մենք մեր հազարամյա հուշարձաններն ավիրում ենք:

Իմ պահանջը որպես հողօգտագործող և Երևանի բնակիչ այն է, որ կանաչ տարածքները վերականգնվեն և էթե հնարավորություն լինի հնագիտական պեղումներ իրականացնեն` հայտնաբերելու այն պատմական փաստերն ու ապացույցները, որ ժամանակին հայերը այդտեղ գինեգործությամբ են զբաղվել:

- **Կարինե Դանիելյան /ՀՀ Հանրային խորհրդի բնապահպանական հարցերի հանձնաժողովի նախագահ, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ/**

Մարի Չաքրյանը և Ռուզաննա Ղազարյանը դիմել էին Հանրային խորհրդի Էկոլոգիական հանձնաժողովին` այս խնդիրները բարձրացնելու և իրականացվող



աշխատանքները կասեցնել տալու խնդրանքով: Մենք քննարկեցինք: Միաձայն որոշեցինք, որ պետք է դիմել ՀՀ վարչապետին, Երևանի քաղաքապետին և ՀՀ գլխավոր դատախազին: Այդպես էլ արեցինք: Նամակը գրեցինք, որ պետք է կասեցնել կառուցապատումը, և կցեցինք այն բացատրությունները, որ պատրաստել էինք այդ ուղղությամբ՝ և՛ բնապահպանական, և՛ պատմամաշակութային ժառանգության պահպանման առումով: Պատասխանը եկել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունից, որի մեջ ասվում է, որ անհրաժեշտ է դիմումը կցել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի առաջին մասով քննվող այսինչ գործին և քննություն կատարել դիմումի մեջ նշված հանգամանքների վերաբերյալ: Դա նշանակում է, որ պետք է հաշվի առնեն բոլոր հիմնավորումները... Հիմա սպասենք, երևի հետո նորից դիմենք, փորձենք պարզել, թե ինչ եղավ: Ցավոք շինարարությունը չի կասեցվել:

• **Հասմիկ Խաչունց /Երևանի ավագանու «Իմ քայլը» խմբակցության քարտուղար/**

Այս հարցի հետ կապված բազմաշերտ խնդրի առաջ ենք կանգնած: Ամենաառաջին խնդիրն արդարության վերականգնումն է քաղաքացիների նկատմամբ: Կառավարությունից կապվել էին ինձ հետ: Ես գիտեմ, որ այս 12 հողօգտագործողների խնդիրը կոնկրետ ուշադրության կենտրոնում է, և կառավարությունից նամակ է ուղարկվել քաղաքապետարան: Կհետևեն այդ նամակին, կփորձենք հասկանալ՝ ուր է գնում և փոխհատուցումը ինչ կերպ է իրականացվելու: Կարծում եմ՝ ավագանի էլ կհասնի այդ խնդիրը: Այս մի մասով հասկանալի իրավիճակում ենք գտնվում, բայց այս խնդրի լուծումը ամբողջ Դավմայի այգիների մեծածավալ խնդրի լուծում չի կարող լինել:

Երկրորդ մեծ խնդիրը, որն անմիջապես առնչվում է քաղաքապետարանին, շինթույլտվությունների հետ կապված խնդիրն է:

Ուզում եմ հասկանալ, այս շինթույլտվությունը, որ տրվել է քաղաքապետարանի կողմից, որ հասել է քաղաքապետարան, ո՞ր պահից է ինչ-որ սխալ գնացել, որ այդ թույլտվությունը տրվել է, որովհետև, ըստ այստեղ հնչած տեղեկությունների, այդտեղ առհասարակ ոչինչ չպետք է արվեր, քանի որ հնագիտական շերտ է: Պետք է միասին աշխատենք, հասկանանք՝ որտեղից է եկել սխալը: Դե հիմա տրված է թույլտվությունը, պետք է հասկանանք, թե ինչպես ենք լուծում այդ հարցը:

Ուզում եմ ֆիքսենք, որ եթե հնարավոր լինի վերականգնել տարածքի ճարտարագիտական, հնագիտական և բնապահպանական տեսքը, դա կլիներ լավագույն լուծումը:

Ինչ-որ փուլում հնագետները և բնապահպանները հարցերի և վեճերի տիրույթ դուրս կգան: Պետք է հասկանալ՝ ով ում է զիջում այս խնդրի արդյունքում: Սա շատ երկար ու մեծ աշխատանք է լինելու:

Մենք բաց ենք, պատրաստ ենք այդ ապօրինությունը փոքել: Որպես պետական մարմին՝ ապօրինություն բացահայտելու լիազորությունը տրված է դատախազությանը: Մենք կարող ենք միայն միջնորդել և տվյալներ տրամադրել: Պետք է թղթերը նայել, փոխանցել համապատասխան տեղ, և տեսնել, թե ինչ արդյունք կտա:

Որպես քաղաքային առանձին սուբյեկտ՝ քաղաքապետարանը սկսել է գոյություն ունենալ 2009թ-ից հետո: Դրա համար է գրված, որ ներկայիս քաղաքապետարանը 2009թ-ից առաջվա որոշումների իրավահաջորդը չէ: Լիազորությունները վերաբաշխվել են, և քաղաքացուն պետք է տեղեկացնել, թե հիմա ով է զբաղվում իրենց խնդիրներով: Քանի որ հիմա այդ լիազորությունները մնացել էին օդում, ու ձեզ այս ու այն կողմ էին անում, դրա համար այդ պատասխանատվությունը կառավարություն-քաղաքապետարան համագործակցությամբ վերցրել ենք, և փորձում ենք ձեր հարցը լուծել: Մոտ 2-3 ամիս այդ բանակցությունները կան: Կարծում եմ՝ կառավարությունը ձեզ հետ շփման գիծը պահել է: Շատ լավ կլինի, որ միասին աշխատենք, կարծում եմ՝ արդյունքի կհասնենք:

- **Դատավոր Հրանուշ Խառատյան.**

Դուք քաղաքի տեղական ինքնակառավարման մարմինն եք, որը ներկայացնում է բնակչության շահերը: Հիմա եթե 2017 կամ 2018 թ. հունվարին շինարարության թույլտվություն է տրվել, դա եղել է այն ժամանակվա Երևան քաղաքի ՀՀԿ ավագանու ցանկությամբ: 2019թ. է եղել լ, մեծ բան չի փոխվում դրանից: Ուզում եմ հասկանալ և խնդրում եմ միանգամից չպատասխանել, որովհետև մեզնից ոչ ոք պատրաստ չէ բոլոր հարցերին լիակատար տիրապետել: Հարցս բարձրացնում եմ, խնդրելով և առաջարկելով ձեզ, սա տեղափոխել քաղաքապետարան՝ ըստ էության հասկանալու: Ինչպես է, որ քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հարություն Թունյանը քաղաքացուն տեղեկացնում է, որ Երևանի համայնքապետարանը չի հանդիսանում Երևանի քաղաքապետարան պետական վարչական հիմնարկի իրավահաջորդ: Բայց ինչպես է, որ դուք հիմա իրավահաջորդն եք այն քաղաքապետարանի, որը ժամանակին հաստատել է այդ կառուցապատման իրավունքը: Եթե քաղաքացին է, դուք իրավահաջորդ չեք, եթե մի հարուստ կառույց է, որի թիկունքում մի քանի նախարարի ստորագրություն է, դուք իրավահաջորդ եք: Ես պատասխան չեմ պահանջում, ես հարց եմ դնում և խնդրում եմ նաև ավագանու անդամների հետ կողմնորոշվել՝ եթե դուք իրավահաջորդ չեք ընդհանրապես ձեզնից առաջ տեղի ունեցած ոչ մի բանի համար, ձեզ չդիմե՞նք:

#### **4. Դատարանի իրավական վերլուծությունը**

Լսելով դիմումատուի, վկաների, տուժողների բացատրությունները, հետազոտելով գործում առկա ապացույցները՝ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.

1. Դալմայի այգիների տարածքում խորհրդային տարիներին գործել է 4 կոլտնտեսություն: ՀՀ Հողային ռեֆորմի արդյունքում կոլտնտեսությունների հողերը մասնավորեցվել են, և դրանք սեփականության իրավունքով անժամկետ և անհատույց տրամադրվել են կոլտնտեսականներին: ՀՀ Գերագույն Խորհրդի 04.02.1991թ. «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքը կիրառելու մասին հ.Ն-0252-1 որոշման 9-րդ և 10-րդ կետերի համաձայն՝ հողերի մասնավորեցում չէր նախատեսվում միայն երկու դեպքում. ա/ երբ հաշվարկված հողաբաժնի փոքր լինելու պատճառով տեխնոլոգիապես հնարավոր չէ առանցին գյուղացիական տնտեսություն վարելը բ/ ՀՀ սահմանամերձ շրջանների առանձին բնակավայրերում: Նշված դեպքերից, ոչ մեկը չի համապատասխանել Դալմայի այգիներին և այդ հողերը պետք է մասնավորեցվեին, սակայն դա չի արվել տարբեր պատճառաբանություններով: Փաստորեն, խախտվել են կոլտնտեսականների իրավունքները: Այդ հողերը տրվել են կոլտնտեսականներին վարձակալությամբ, վերջիններս տարիներ շարունակ բարեխիղճ մշակել են և վճարել վարձավճարները:
2. Հողօգտագործողները դիմել են Երևանի քաղաքապետարան իրենց կողմից օգտագործվող հողամասերը սեփականաշնորհելու խնդրանքով: Սակայն մերժվել են պատճառաբանությամբ, որ դրանք բնակավայրի ընդհանուր օգտագործման տարածք են՝ վկայակոչելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ մասը, որի համաձայն. «Արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք՝ 6/ բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողեր են /հրապարակներ, այգիներ, լողափներ և ընդհանուր օգտագործման այլ տարածքներ/»:
3. Հողօգտագործողները փորձել են նաև այդ հողերի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերել դատական կարգով՝ հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասը և 72-րդ հոդվածով սահմանված ձեռքբերման վաղեմության իրավունքը: Սակայն դատարանները մերժել են հողօգտագործողների հայցերը՝ պատճառաբանելով, որ Դալմայի այգիները համարվում են պատմամշակութային հուշարձան և ենթակա չեն սեփականաշնորհման /օրինակ՝ հ.2-442-2001թ. քաղ.գործով կայացված վճիռը/:
4. Դալմայի այգիները՝ որպես տեղական նշանակության հուշարձան, ընդգրկված են եղել ՀՄՄՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության կողմից 24.01.1990թ. հաստատված ցուցակում: Սակայն, ՀՀ կառավարության 07.10.2004թ. հ.1616-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում որպես այգեպուրակային ժառանգության մաս կամ բնության հուշարձան չեն ընդգրկվել: Դա արվել է այն նպատակով, որ Դալմայի այգիների տարածքն օտարվի:

5. Դալմայի այգիների տարածքը, չնայած հանդիսացել է ընդհանուր օգտագործման հող /ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդված/ և պատմամշակութային հուշարձան և զբաղեցրած է եղել հողօգտագործողներով, որոնց հետ առկա էին կնքված պայմանագրերը, 2001-2004թթ. օտարվել է կամ տրամադրվել օգտագործման մասմաս տարբեր նոր անձանց, առանց հաշվի առնելու իրական, փաստացի հողօգտագործողների՝ այդ հողերը ձեռք բերելու նախապատվության իրավունքը, ինչով, կրկին խախտվել են հողօգտագործողների իրավունքները և օրինական շահերը:
6. ՀՀ կառավարության **27.03.2003թ.** «Երևանի Դալմայի այգիների պահպանման ենթակա հողերի սահմանների և նպատակային նշանակության փոփոխության մասին **հ.1941-Ս** որոշմամբ փոխվել են Դալմայի այգիների իրական սահմանները, ինչով կրճատվել են տարածքի չափերը, և բարձարժեք գյուղատնտեսական, անտառային ու պատմամշակութային հողերի կատեգորիան փոխվել է, հատկացվել են դրանք նոր անձանց կառուցապատման նպատակով: Սույն որոշումն ընդունվել է ՀՀ օրենսդրության և միջազգային նորմերի /Օրհուհի կոնվենցիայի/ խախտմամբ: Մասնավորապես, նշված որոշումն ընդունվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի խախտմամբ, քանի որ այն ընդունվել է 2003թ., իսկ ստորագրվել է ՀՀ վարչապետի և ՀՀ նախագահի կողմից մեկ տարի անց՝ 2004թ., նույնիսկ համարակալումը չի համապատասխանում նույն օրվա ընդունված մեկ այլ որոշման հետ: Օրինակ, **27.03.2003թ. հ.503-Ս** որոշմամբ «Ֆրանկ Մյուլլեր Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը հող է տրամադրվել՝ Երևանում ժամացույցների մասերի արտադրության գործարան կառուցելու նպատակով, պարզ է, որ նույն օրը որոշումների համարակալման այդպիսի տարբերություն չի կարող լինել: Բացի այդ, այս որոշման ընդունման մասին պետք է նախապես իրազեկվեին փաստացի հողօգտագործողները և անցկացվեին հանրային քննարկումներ, ինչը չի արվել: Այդ կապակցությամբ «Թրասփերենսսի ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպությունը, «Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ն և «Հայկական բուսաբանական ընկերություն» ՀԿ-ն համատեղ դիմել էին Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտե, որն էլ 2004թ. և 2006թ. քննել է դիմումը և 2008թ. կայացրել հ.1/7 որոշումը Հայաստանի առնչությամբ, որով ճանաչել է 27.03.2003թ. հ.1941-Ս որոշումը և դրան առնչվող մի քանի որոշում ևս կոնվենցիային ոչ համապատասխան: Այդ որոշմամբ Հայաստանին ներկայացվել են սխալներն ուղղելու/ *վերացնելու* առաջարկություններ, որոնք մինչ օրս չեն կատարվել (տես՝ ECE/MP.PP/C.1/2006/2/Add.1; ECE/MP.PP/2008/5/Add.2 2 April 2008; ECE/MP.PP/2008/L.8/Add.2 4 April 2008):
7. *Ճշտված չեն Դալմայի այգիների տարածքի չափերը և հողերի նպատակային նշանակությունը: Դալմայի այգիների հողերը պատշաճ քարտեզագրում և կադաստրային գրանցում չեն ստացել, ինչը հնարավորություն է տվել այդ հողերը ոչ նպատակային օգտագործելու, խախտելու իրական սեփականատերերի և օրինական հողօգտագործողների իրավունքները, ոչնչացնելու բարձարժեք*

այգիները, կենսաբազմազանությունը և պատմամշակութային օբյեկտները: Այսպես, Երևան քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների կոմպլեքսային պահպանության և օգտագործման» նախագծով (Երքաղխորհրդի կողմից 1991թ. ապրիլի 17-ին հաստատված հ6/18 որոշմամբ), «Դալմայի այգիներ-Սարդարի այգի» հատուկ պաշտպանվող գոտին կազմել է մոտ 750 հա մակերես, սակայն սահմանները փոփոխվել են, տարածքը կրճատվել է, քանի որ հետագայում այդ որոշումը (նաև նախագիծը) Երևանի քաղաքապետի 2002թ. օգոստոսի 30-ի հ 1137 որոշմամբ ճանաչվել է ուժը կորցրած: Այնուհետ, 27.03.2003թ. հ.1941-Ա որոշմամբ Դալմայի այգիների 256 հա տարածք նախատեսվել էր դարձնել անտառային կատեգորիայի հող: Դիմումատուի հարցման պատասխանում Երևանի քաղաքապետարանը տեղեկացրել էր, որ 228 հա տարածք հանդիսանում է ««Հայանտառ» տնտեսության հող»: Սակայն, «Հայանտառ» ՊՈԱԿ-ն այդ մասին տեղեկացված չէ և իր հաշվեկշռում և կադաստրում այդ հողը գրանցված չէ: Դիմումատուի վերջին հարցման պատասխանում Երևանի քաղաքապետարանը գրությամբ տեղեկացրել է, որ 256 հա անտառային նշանակության հողերը 2009թ-ին ՀՀ կառավարության որոշմամբ սանհատույց սեփականության իրավունքով փոխանցվել են Երևանի քաղաքային համայնքին: Այս հակասական տեղեկությունները հնարավորություն չեն տալիս պարզելու Դալմայի այգիների իրական սահմանները և չափերը, ինչը հնարավորություն է տալիս առանց հաշվառման, անօրինական օտարել անտառային և պատմամշակութային հողերը, խախտել հողի իրական սեփականատերերի և օգտագործողների իրավունքները: Այս կապակցության առաջանում են բազմաթիվ հարցեր, մասնավորապես, ինչի՞ հիման վրա է փոխվել հողերի կատեգորիան, արդյո՞ք այն արվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչի՞ հիման վրա են օտարվել Դալմայի այգիների հողերը, ինչու՞ չեն գրանցվել այդ գործարքները կադաստրում, ինչպե՞ս են փաստացի զբաղված /երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնված/ հողերը օտարվել և օգտագործման հանձնվել այլ անձանց՝ առանց իրական տիրապետողների նախապատվության իրավունքը հաշվի առնելու:

8. Դալմայի այգիների հողերն օտարելու մասին որոշումներում չեն նշվել, որ դրանք գտնվում են Դալմայի այգիներում, այլ նշվել են միայն այն փողոցների անունները, որոնց այդ տարածքները հարում են: Դրանով քողարկվել է անտառային և պատմամշակութային հողերի անօրինական օտարումը և, կեղծ տվյալներ կերկայացնելով, ստացել են փորձաքննական դրական եզրակացություններ:
9. Ի պատասխան դիմումատուի հարցմանը Երևանի քաղաքապետարանը պատասխանել է, որ «Ծիծեռնակաբերդի խճուղուն հարող տարածքում կառուցապատման թույլտվություններ են տրամադրվել՝ հիմք ընդունելով «Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը» (2005-2020թթ., հաստատված ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 15-ի հ. 2330-Ն որոշմամբ): Գրության մեջ նաև մատնանշվել է, որ «Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը անցել է անհրաժեշտ համալիր փորձաքննություն, այդ թվում նաև բնապահպանական»:

Սակայն, հանրությունը, մասնավորապես, Դալմայի այգիների հողերի իրական տիրապետողները տեղեկացված չեն եղել անցկացվող փորձաքննության մասին, և լսումներ չեն իրականացվել:

10. Դալմայի այգիների հողեցից հատկացվել է «Պարկ Գրուպ» ընկերությանը, «ԵՊՀ շրջանավարտների միավորում» ՀԿ-ին, սակայն, վերջիններիս շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փաստաթղթերում ներկայացվել են կեղծ տվյալներ, որ տարածքն ամայի է, բուսագուրկ, ծառագուրկ, կառույցներից զուրկ, հուշարձաններ չեն հայտնաբերվել, և Շրջակա միջավայրի նախարարը, հիմնվելով այս կեղծ տվյալների վրա, հաշվի չառնելով Երևանի հատակագիծը, որտեղ փաստորեն նշվում է, որ տարածքում առկա են հնագիտական ռեսուրսներ, ստորագրել է փորձաքննական դրական եզրակացությունը՝ վտանգելով ոչ միայն փաստացի այգիներն ու կենսազանգվածը, այլև հազարամյակների պատմություն ունեցող, աշխարհում բացառիկ խաղողագործական լանդշաֆտները, հնագիտական մյուս արժեքներն ու միջնադարյան շինությունները:
11. Հողերի հատկացումը սովորաբար արվել է այնպիսի որոշումներով, որտեղ Դալմայի այգիները չեն հիշատակված: Մասնավորապես, ՀՀ կառավարության «Երևանի Սյասնիկյանի հրապարակի վրա գտնվող անավարտ շինարարության օբյեկտի մասին» 05.12.02թ. հ.2023-Ն որոշմամբ. «Միջազգային բիզնես կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով որպես փոխհատուցում տրամադրվում է Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղուն հարող տարածքից 5,7 հեկտար մակերես ունեցող բնակելի և հասարակական նշանակության կառույցներով, իսկ տարածքի հետին պլանում առանձնատնային տիպի բնակելի շենքերով կառուցապատման նշանակության հողամաս՝ մեկ քառակուսի մետրն ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկմամբ՝ 40 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ գնահատմամբ»: Ինչպես երևում է, որոշման վերնագիրն ընդհանրապես առնչություն չունի Դալմայի այգիների տարածքի հետ, սակայն այնտեղ նախատեսված է հողհատկացում Դալմայի այգիներում, և պարզ չէ՝ ինչպես է այն իրականացվել, մրցույթով, թե՛ առանց, ինչպե՞ս է ձևավորվել այդ արժեքը, նշված արժեքը ի՞նչ տարածքի համար է սահմանված՝ մեկ քառակուսի մետրի, թե՛ 5,7 հա համար:
12. ՀՀ կառավարության 2004թ. մարտի 31-ի «Տարածքների գոտեվորման և հողերի նպատակային նշանակության փոփոխության մասին» N 397-Ա որոշմամբ հերթական անգամ փոխել են Դալմայի այգիների սահմանները՝ կրկին տարածքները կրճատելով և հողերի կատեգորիան փոխելով: Որոշմամբ չի հիմնավորվել այդ փոփոխությունների անհրաժեշտությունը, չի պահպանվել հողերի կատեգորիայի փոփոխման օրենսդրական կարգը: Այդ որոշումը հնարավորություն է տվել հողերի հերթական խմբաքանակը օտարելու համար: Այսպես, ՀՀ կառավարության 12.05.2004թ. թիվ 821-Ա որոշմամբ հող է օտարվել «Հայկական էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին: ՀՀ կառավարության 21.07.2004թ. թիվ 1357 որոշմամբ հող է հատկացվել Միջազգային Բիզնես կենտրոնին:

13. ՀՀ կառավարության 2004թ. հոկտեմբերի 21-ի «Երևանի քաղաքապետին առանց մրցույթի հողամասերի վարձակալության պայմանագրեր կնքելու թույլտվություն տալու մասին» N 1530-Ն որոշում /խոսքը 256,0 հեկտարի մասին է/: Պարզ չէ, թե ինչ իրավական նորմի հիման վրա է այս որոշումը ընդունվել, ինչպես են որոշվել՝ որ հողերն են վաճառվում կամ տրամադրվում առանց մրցույթի և ինչու առանց դրանց:
14. ՀՀ կառավարության տարբեր որոշումներով սահմանված են Դավմայի այգիների օտարման տարբեր սակագներ, մասնավորապես, 2003թ. սեպտեմբերի 11-ի «Հողերի նպատակային փոփոխության և «Հայկական ավիաուղիներ» փակ բաժնետիրական ընկերությանը հողամաս տրամադրելու մասին» հ.1281-Ա որոշմամբ սահմանված է 20 ԱՄՆ դոլար, այսինքն, նախորդ որոշմամբ սահմանվածից երկու անգամ պակաս: Իսկ ՀՀ կառավարության 2004թ. մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. դեկտեմբերի 5-ի N 2023-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 345-Ն որոշմամբ (կետ 4.գ) Ծիծեռնակաբերդի խճուղուն հարողը դարձրել են Աթենքի փողոցին հարող, սահմանվել է 40 ԱՄՆ դոլար:
15. Տարբեր մոտեցում է ցուցաբերվել նաև իրական հողօգտագործողներին վնասների փոխհատուցման դեպքում՝ մի մասը /10 հոգի/ «Լուսավան դիվելոպմենթ» ընկերությունը փոխհատուցել է 10-15ԱՄՆ դոլար 1քմ համար, մյուսները /12 հոգի/ ընդհանրապես փոխհատուցում չեն ստացել: Պարզ չեն նաև փոխհատուցումներ տրամադրելու ֆինանսական աղբյուրների իրավական հիմքերը: Մի մասին փոխհատուցել են նոր հողօգտագործողները, մյուս մասին՝ Երևանի քաղաքապետարանը:
16. Դավմայի այգիների հողերի կատեգորիայի փոփոխումը և սահմանների կրճատումը տեղի է ունեցել ՀՀ կառավարության «Հողերի կատեգորիան փոխելու մասին» 18.08.2006թ. N 1302-Ա /անհատական/ որոշմամբ, որը նույնպես անհիմն է և անօրինական:
17. Հաջորդ ոտնձգությունը Դավմայի այգիների հողերի վրա եղել է ՀՀ կառավարության «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» 13.01.2018թ. հ.119-Ա որոշմամբ, կրկին անօրինական փոխվել է այդ հողերի նպատակային նշանակությունը և հետագայում օտարվել և հանձնվել օգտագործման:
18. ՀՀ կառավարությունը 2018թ. հավանություն է տվել երկու ներդրումային ծրագրերի, որով հողօգտագործման իրավունք է տվել երկու կազմակերպություններին: Մասնավորապես, ՀՀ կառավարության 11.01.18թ. N5-Ա որոշմամբ օգտագործման իրավունք է տրվել «Պարկ Գրուպ» ընկերությանը և 22.03.2018թ. N 308-Ա որոշմամբ հողամաս է օտարվել «Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» ՀԿ-ին: Իրենց բնույթով այդ ծրագրերը ներդրումային չեն, սակայն այդ անվան տակ արտոնյալ պայմաններով, առանց մրցույթի նշված հողամասերը տրամադրվել են այդ կազմակերպություններին: Մասնավորապես, ինչպե՞ս կարելի է ներդրումային

համարել «Պարկ Գրուպ» ընկերության ծրագիրը, երբ վերջինս որևէ գումար չի ներդրել: Հակառակը գրավադրել է նշված հողամասի վարձակալության իրավունքը բանկում և վարկ է ստացել: Իսկ «Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» ՀԿ-ի ծրագիրը սովորական բնակելի շենքերի կառուցապատման ծրագիր է, ինչը իրականացվում է ապագա բնակիչների գումարներով, և այն նույնպես ներդրումային չի կարող համարվել: Նշված ծրագրերի ՇՄԱԳ փորձաքննություններն արվել են օրենքի խախտմամբ: «Պարկ Գրուպ» ընկերության ծրագիրը փորձաքննության է ենթարկվել ՀՀ կառավարության որոշման ընդունումից մեկ տարի անց՝ 2019թ., բացի այդ երկու դեպքերում էլ ընկերությունների կողմից ներկայացվել են կեղծ տվյալներ տարածքում պատմամշակութային արժեքների, այլ հողօգտագործողների, կանաչ տարածքների առկայության մասին և օրենքի խախտմամբ ստացել են դրական փորձաքննական եզրակացություն:

19. Չկա միասնականություն նաև հողերի հատկացման կարգի առումով. հողերի մի մասը հատկացվել է ՀՀ կառավարության որոշումներով, իսկ մյուս մասը՝ Երևանի քաղաքապետարանի որոշումներով, ինչը հակասում է ՀՀ օրենսդրության պահանջներին: Երևանի քաղաքապետի մի շարք որոշումներով հողամասեր են հատկացվել, օրինակ, անհատույց, մշտական օգտագործման «Փյունիկ» ՀԿ-ին /25.06.2003թ. հ. 1376-Ս որոշում/, ՀՀ պաշտպանության նախարարությանը /Երևանի քաղաքապետի 10.09.2004թ. N1741-Ս որոշում/, հողեր են հատկացվել այլ անձանց նաև Երևանի քաղաքապետի 10.05.2005թ. 984-Ս, 12.02.2018թ. հ. 418-Ս, 14.02.2018թ. հ. 470-Ս որոշումներով: Այդ որոշումներով խախտվել են ինչպես ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը, այնպես էլ Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2014 թվականի ծրագրի վերաբերյալ» 10.12.13թ. որոշման 2.2. կետով սահմանված պահանջները, համաձայն որի 2.2 կետի՝ «հողամասերի կամ դրանց առանձին հատվածների աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողամասի կադաստրային արժեքից»: Սակայն, Դալմայի այգիների հողերը օտարվել են կամ օգտագործման են տրամադրվել հիմնականում առանց մրցույթի կամ աճուրդի և կադաստրայինից ավելի ցածր արժեքով կամ անհատույց:
20. Դալմայի այգիների հողերի սահմանների և նպատակային նշանակության փոփոխումը իրականացվել է հիմնականում անհատական ակտերով, որոնք չեն անցել հանրային քննարկումներ, չեն հրապարակվել այն դեպքում, երբ դրանք իրենց բնույթով նորմատիվ բնույթի են: Բացի այդ, անհատական ակտերի հիման վրա ընդունվել են նորմատիվ բնույթի իրավական ակտեր: Օրինակ, ՀՀ կառավարության 21.10.2004թ. N 1530-Ն որոշումն ընդունվել է՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 27.03.2003թ. N 1941-Ս և 31.03.2004թ. N 397-Ս որոշումները, ինչն անթույլատրելի է, և դա խախտել է «Իրավական ակտերի մասին» և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքների պահանջները:



21. Անտառային օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Պետական անտառները և անտառային հողերը ենթակա չեն օտարման համայնքներին, իրավաբանական անձանց և քաղաքացիներին»: Մինչդեռ գործի քննությամբ պարզվեց, որ անտառային ֆոնդի հողերի, այդ թվում՝ հատուկ պահպանվող բնական տարածքների կատեգորիան փոխվել է, և դրանք օտարվել են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:

22. ՀՀ անտառային օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն. «Անտառային տնտեսություն վարող անձինք պարտավոր են.

ա) ապահովել անտառային հողերի նպատակային օգտագործումն ու պահպանումը.

բ) ապահովել անտառների վերականգնումը և անտառագուրկ տարածքների անտառապատումը, դրանց արտադրողականության բարձրացմանն ու անտառային պաշարների արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

գ) իրականացնել անտառային հրդեհների հայտնաբերումն ու կանխումը, հակահրդեհային անվտանգության միջոցառումները, անտառների վնասատուների և հիվանդությունների վնասակարության կանխարգելումը.

դ) ապահովել անտառների ջրապաշտպան, հակաէրոզիոն, սանիտարահիգիենիկ, առողջարարական և այլ օգտակար հատկությունների պահպանումը.

ե) նպաստել կենսաբազմազանության պահպանությանն ու վերարտադրությանը»:

Դալմայի այգիների անտառային տարածքների պետական կառավարման մարմինների կողմից ոչ պատշաճ են կատարվում նշված պարտավորությունները կամ դրանք խախտվում են ՀՀ կառավարության անօրինական որոշումներով: Դա պայմանավորված է նաև նրանով, որ այդ անտառային հողերը փաստացի չեն փախանցվել «Հայանտառ» ՊՈԱԿ-ին, որը մասնագիտացված կազմակերպություն է և կարող էր իրականացնել քաղաքային անտառների պահպանությունը և վերականգնումը:

23. ՀՀ անտառային օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Անտառային հողերի հարակից տարածքներում օբյեկտների նախագծումը, տեղաբաշխումը, շինարարությունը և գործարկումը պետք է ապահովեն անտառների վիճակի վրա բացասական ազդեցությունների կանխարգելումը: Տարածքների անտառային հողերին հարակից լինելը որոշվում է տվյալ գործունեության բնապահպանական փորձաքննության հիման վրա»: Այս դրույթը ոչ միայն չի կիրառվել, այլ հակառակը, հատվել են մեծ քանակությամբ ծառեր, վնասվել են ջրագծերը, և թույլատրվել է կառուցապատում անտառային ֆոնդի հողերի վրա, ինչը ՀՀ անտառային օրենսգրքի պահանջի կոպիտ խախտում է: Շրջակա միջավայրի նախարարությունը, փորձաքննություն իրականացնելիս, չի գնահատել Դալմայի այգիների անտառային ֆոնդի հողերի և պատմամշակութային օբյեկտների առկայությունը:

24. ՀՀ կառավարության «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» 2007թ-ի օգոստոսի 30-ի հ.1045-Ն որոշման 8-րդ կետի 8.1 ենթակետով սահմանված է, որ և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման դեպքում դիմումատուն երեք ամսվա ընթացքում լիազորված պետական մարմնի համաձայնեցմանն է ներկայացնում անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման վերաբերյալ ծրագիր, որը ներառում է օգտագործման տրամադրվող անտառային տարածքի առնվազն կրկնապատիկի չափով անտառապատման աշխատանքների իրականացման նախագիծը և անտառապատման ժամանակացույցը: Այս որոշման պահանջն էլ չի կատարվել, և նոր հողօգտագործողներին Երևանի քաղաքապետարանը չի պարտավորեցրել վերականգնել պատճառված վնասները կրկնակի չափով իր հաշվին անտառտնկման միջոցով:

25. ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված է քրեական պատասխանատվություն ՀՀ անտառային և բնապահպանական օրենսդրության խախտման համար: Մասնավորապես.

- ՀՀ քրեական օրենսգրքի 295-րդ հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված օրգանիզմների բնակության անհետացող կամ հազվագյուտ վայրերը ոչնչացնելը, որը դիտավորությամբ կամ անզգուշությամբ առաջացրել է այդ օրգանիզմների ամբողջական պոպուլյացիաների բնաջնջում (մահ) պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:
- ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն. «1. Անտառային ֆոնդի տարածքներում, ինչպես նաև անտառային ֆոնդի մեջ չմտնող տարածքներում կամ հատումներն արգելված ծառերը, թփերը հատելը կամ ոչնչացնելը, պետական կամ մասնավոր սեփականություն համարվող բուսածածկը ոչնչացնելը կամ մինչև աճի դադարեցման աստիճանի վնասելը, եթե այդ գործողությունները զգալի վնաս են պատճառել՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:  
2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝  
1) պաշտոնեական դիրքն օգտագործելով,  
2) բնության հատուկ պահպանվող տարածքներում,  
3) խոշոր վնաս պատճառելով,

4) Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված ծառատեսակների կամ բուսածածկի նկատմամբ՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Նույն արարքները, որոնք առաջացրել են առանձնապես խոշոր վնաս՝ պատժվում են կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

4. Սույն հոդվածում զգալի վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), խոշոր վնաս է համարվում չորսհարյուրապատիկից յոթհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), առանձնապես խոշոր վնաս է համարվում յոթհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը)»:

- ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի համաձայն. «1. Անտառներ, ինչպես նաև անտառային ֆոնդի մեջ չմտնող տնկարկներ ոչնչացնելը կամ վնասելը, որը կատարվել է կրակի, պայթուցիկ նյութերի կամ առավել վտանգի այլ աղբյուրի հետ անզգույշ վերաբերմունքի արդյունքում, և եթե այդ գործողությունները խոշոր վնաս են պատճառել՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Անտառներ, ինչպես նաև անտառային ֆոնդի մեջ չմտնող տնկարկներ ոչնչացնելը կամ վնասելը, որը կատարվել է հրդեհման կամ հանրավտանգ այլ եղանակով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով»:

- ՀՀ քրեական օրենսգրքի 298-րդ հոդվածի համաձայն. «Արգելոցների, արգելավայրերի, ազգային պարկերի, բնության հուշարձանների և պետության կողմից հատուկ պահպանվող բնական այլ տարածքների կամ օբյեկտների ռեժիմը խախտելը, որը դիտավորությամբ կամ անզգույշությամբ առաջացրել է էական վնաս՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

26. Մինչև օրս չեն հարուցվել քրեական գործեր բնությանը և պետությանը պատճառված վնաս հասցնելու համար և չի վերականգնվել վնասը:
27. Այս առանձին օրինակները ցույց են տալիս, որ չնայած այս խախտումները բացակայում են Կադաստրի պաշտոնական տվյալներում, այնուամենայնիվ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն և նրա տարածքային մարմինները գույքի նկատմամբ իրավունքի գրանցման իրենց աշխատանքներում ցուցաբերել են անփութություն՝ դրանով իսկ խախտելով իրենց լիազորությունների իրականացման համար սահմանված կանոնակարգերի դրույթները և տեղում չեն փաստագրել իրավիճակը:
28. ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ բնապահպանության նախարարությունները չեն կատարել օրենքով իրենց վերապահված՝ «Հայաստանի Հանրապետության պետական անտառային կադաստրի վարումը, անտառային հողերի պետական հաշվառումը» գործառույթը:
29. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ և ստանձնել պարտավորություններ, մասնավորապես.
- «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» /Օրհուս/ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր Կողմ ընդունում է անհրաժեշտ օրենսդրական, կանոնակարգող և այլ միջոցներ, ներառյալ միջոցներ՝ ուղղված սույն կոնվենցիայի տեղեկատվության մատչելիությանը, հասարակայնության մասնակցությանը, արդարադատության մատչելիության դրույթների իրականացումը կարգավորող նորմերի համատեղելիությանը, ինչպես նաև պատշաճ միջոցներ՝ ուղղված այդ դրույթների կիրառման ապահովմանը՝ սույն Կոնվենցիայի դրույթների իմպլեմենտացիայի նպատակով՝ հստակ, թափանցիկ և համաձայնեցված դաշտ ձևավորելու համար:
  - «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանման մասին» /Բեռն/ կոնվենցիայի, 5-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի համապատասխան և անհրաժեշտ օրենսդրական ու վարչական միջոցներ՝ 1-ին հավելվածում նշված վայրի ֆլորայի տեսակների հատուկ պահպանությունն ապահովելու նպատակով: Պետք է արգելվի նման բույսերը դիտավորությամբ պոկելը, հավաքելը, կտրելը կամ արմատախիլ անելը:
  - ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի շրջանակներում ընդունված «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները/ներդրումը» (INDC) փաստաթղթով (ՀՀ կառավարության 10.09.15թ. հ.41-Ս որոշում) Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունը՝ մինչև 2050 թվականը երկրի անտառապատվածությունը հասցնել 20.1%-ի,

կատարելու համար: Նախատեսված է «երկրի արտաքին պարտք-բնություն» հաշվանցման մեխանիզմ՝ անտառի վերականգնման համար, ինչը անհրաժեշտ է կիրառել:

- «Կենսաբանական բազմազանության մասին» Կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն. «1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որքանով դա հնարավոր և նպատակահարմար է.

ա/ համապատասխան ընթացակարգեր է ներդնում, որոնց համաձայն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում է պահանջվում իր կողմից նախատեսվող ծրագրերի նկատմամբ, որոնք կարող են զգալի բացասական ազդեցություն գործել կենսաբանական բազմազանության վրա՝ այդպիսի ազդեցության հետևանքները կանխատեսելու և նվազեցնելու նպատակով, և, նպատակահարմարության դեպքում, ապահովում է այդպիսի ընթացակարգերի իրականացմանը հանրության մասնակցության հնարավորությունը,

բ/ համապատասխան միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար իր կողմից իրականացվող այն ծրագրերի և քաղաքականության էկոլոգիական հետևանքների հաշվի առնելը, որոնք կարող են զգալի բացասական ազդեցություն գործել կենսաբանական բազմազանության վրա»:

- «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «2. Ձգտելով սույն Կոնվենցիայի նպատակների իրականացմանը՝ Կողմերը.

ա/ համալիր մոտեցում են ընդունում անապատացման և երաշտի ֆիզիկական, կենսաբանական և սոցիալ-տնտեսական ասպեկտների նկատմամբ,

գ/ աղքատության արմատապես վերացմանն ուղղված ռազմավարություններն ինտեգրացվում են անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների նվազեցման ջանքերի մեջ,

դ/ նպաստում են Կոնվենցիայի Կողմ հանդիսացող ազդեցության ենթարկված պետությունների միջև համագործակցությանը շրջակա միջավայրի պաշտպանության և հողային ու ջրային ռեսուրսների պահպանության ոլորտներում, քանի որ այդ համագործակցությունը նպաստում է անապատացման և երաշտի դեմ պայքարին»:

- Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիան հիմնվել է այն գաղափարի վրա, որ մարդու կյանքի որակն ուղղակի կախվածության մեջ է նրան շրջապատող միջավայրի որակից և, հետևաբար, կարևոր են ոչ միայն արժեքավոր բնական և մշակութային լանդշաֆտները, այլ նաև առօրյա միջավայրը, լքված և դեգրադացված տարածքները: Լանդշաֆտներն են ձևավորում երկրի ինքնատիպ պատկերը, արտահայտում բնակվող մարդկանց արժեքային համակարգը, ինչպես նաև խթանում կամ

արգելակում են տնտեսական զարգացումը: Ըստ Կոնվենցիայի՝ լանդշաֆտը ճանաչվում է որպես հանրության և անհատական բարեկեցության (ֆիզիկական, ֆիզիոլոգիական, հոգեբանական և ինտելեկտուալ իմաստով) նախապայման, ինչպես նաև կայուն զարգացմանն ու տնտեսական գործունեությանը նպաստող ռեսուրս: Կոնվենցիայի համաձայն՝ անտառային լանդշաֆտների վերացումը նույնպես կարող են առաջացնել տեսողական /վիզուալ/ աղտոտում: «Վիզուալ աղտոտման ներագրեցությունը մարդու հոգեբանական վիճակի վրա գնահատվում է որպես էսթետիկական բնույթի գործոն և համարվում ոչ պակաս վտանգավոր, քան շրջակա միջավայրի աղտոտման այլ տեսակները: Առօրյա կյանքում տեսողական աղտոտումից առաջացող ընկճվածության արդյունքում մարդը մշտապես գտնվում է հոգեբանական անհարմարավետության (դիսկոմֆորտի) վիճակում, ինչը բացասաբար է անդրադառնում մարդու տրամադրության և առողջության վրա»:

Ելնելով վերը նշվածից, կատարելով բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ և միջազգային նորմերի պահանջներով՝ ՀՀ Բնապահպանական հանրային դատարանը

**ՎՃՌԵՑ**

1. Դալմայի այգիների առնչությամբ թույլ տրված օրինախախտումները, որոնք խաթարել են Երևանի էկոլոգիական անվտանգությունը, հանգեցրել են էկոհամակարգերի և պատմամշակութային օբյեկտների ոչնչացմանը, նպաստել են սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացմանը, խախտել են Երևանի բնակիչների էկոլոգիական, ինչպես նաև Դալմայի այգիների հոոգտագործողների իրավունքները, ինչի արդյունքում պատճառվել է անդառնալի էկոլոգիական, մշակութային և առանձնապես խոշոր չափերի տնտեսական վնաս, ճանաչել որպես բնության, մարդու և պետության դեմ ուղղված հանցագործություն:

2. Ստեղծված իրավիճակի համար պատասխանատու ճանաչել ՀՀ կառավարությանը, ՀՀ արդարադատության, ՀՀ շրջակա միջավայրի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություններին, ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և Երևանի քաղաքապետարանին:

**2. Դիմել ՀՀ գլխավոր դատախազություն՝ պահանջելով.**

ա/ Ստուգել՝ Դալմայի այգիների հողերի քարտեզագրման, կադաստրային գրանցումների, կարգավիճակի և կատեգորիայի փոփոխման, հողերի հատկացման,

օտարման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության օրինականությունը:

բ/ Պարզել, թե ինչ տարածք է զբաղեցրել Դալմայի այգին 1991թ. դրությամբ և ինչ տարածք է զբաղեցնում այն ներկայում, ստուգելով բոլոր հողհատկացումների, հողերի օտարման և օգտագործման տրամադրման, քարտեզագրման օրինականությունը:

գ/ Ստուգել 2001թ. Դալմայի այգիները պատմամշակութային հուշարձանների ցանկից հանելու հիմքերը և դրանց օրինականությունը:

դ/ Ստուգել ՀՀ կառավարության 2004թ. մարտի 31-ի «Տարածքների գոտիավորման և հողերի նպատակային նշանակության փոփոխության մասին» հ. 397-Ա որոշմամբ Երևանի Աթենքի, Լենինգրադյան, Սեբաստիա փողոցների և Ծովակալ Իսակովի պողոտային հարող տարածքների գոտիավորման սխեմայի և դրան համապատասխան նշված հողերի նպատակային նշանակությունների փոփոխման օրինականությունը:

ե/ Ստուգել ՀՀ կառավարության 11.01.2018թ. հ. 5-Ա որոշմամբ հաստատված ներդրումային ծրագրի, առանց մրցույթի «Պարկ Գրուպ» ՍՊԸ-ին հողի հատկացման և կառուցապատման իրավունքի տրամադրման, հողօգտագործման իրավունքի գրավադրման, ներկայացված ծրագիրը ներդրումային համարելու օրինականությունը:

զ/ Ստուգել ՀՀ կառավարության 22.03.2018թ. հ. 308-Ա ներդրումային ծրագրին հավանություն տալու և «Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպությանը հողամաս օտարելու մասին որոշմամբ 6,57 հեկտար մակերեսով, 457272 հազ. դրամ կադաստրային արժեքի ձևավորման և հողամասը ուղղակի վաճառքի միջոցով կազմակերպությանն օտարելու օրինականությունը:

է/ Ստուգել Երևան քաղաքի Մոնթե Մելքոնյան 31 հասցեում «Երևան պարկ» ընտանեկան ժամանցի և զվարճանքի կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման 09.01.2019թ. /01.09.2019թ./ հ. ԲՓ-01 փորձաքննական դրական եզրակացության տրամադրման օրինականությունը:

ը/ Ստուգել «Մոնթե Մելքոնյան փողոցին հարակից տարածքում նախատեսվող «Վերածնունդ» երիտասարդական ավանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության» 22.02.2019թ. հ. ԲՓ-07 փորձաքննական դրական եզրակացության տրամադրման օրինականությունը:

թ/ Ստուգել «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից մշակված հետևյալ նախագծերի օրինականությունը, դրանց համապատասխանությունը Երևանի գլխավոր հատակագծին և ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին.

Իսակովի պողոտայով, Լենինգրադյան և Աթենքի փողոցներով պարփակված տարածքների գոտիավորման և կառուցապատման նախագծի /2014թ./ Երևան քաղաքի համար քաղաքաշինական ծրագրերի մշակման աշխատանքների շրջանակում՝ Երևանի «Դավայի այգիներ» անտառպուրակային պատմամշակութային համալիրի ստեղծման ծրագրի /2017թ./, ինչպես նաև «Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրի նախագծի մշակման աշխատանքները կազմակերպելու մասին» հ. 3762-Ա որոշման՝ «Քաղաքաշինություն և ճարտարապետություն» ոլորտներին վերաբերող թեմաներում առաջարկվել է «Երևանի Սոնթե Մելքոնյան փողոցի արևմտյան հատվածի կառուցապատման կարգավորման նախագծի և Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող տարածքի «Պասկևիչի բլուրից հարավ» գոտևորման և կառուցապատման էսքիզային նախագծի օրինականությունը:

ժ/ Ստուգել Դավայի այգու հողօգտագործողներին տրամադրված փոխհատուցումների համաչափությունը, հավասարաչափությունը, համարժեքությունը և դրանց աղբյուրները:

### **3. Դիմել ՀՀ քննչական կոմիտեին՝ պահանջելով.**

ա/ Հարուցել քրեական գործեր՝ Դավայի այգիների հողերի անօրինական քարտեզագրման, կարգավիճակի և կատեգորիայի փոփոխման, հողերի հատկացման, օտարման, էկոլոգիական փորձաքննության, հողօգտագործողների իրավունքների խախտման, պատմամշակութային արժեքների ոչնչացման, էկոլոգիական վնասի պատճառման մեջ մեղավոր անձանց նկատմամբ և պատասխանատվության ենթարկել բոլոր մեղավոր անձանց՝ վերականգնելով պետությանը և քաղաքացիներին պատճառված վնասը:

բ/ Հարուցել քրեական գործ՝ Դավայի այգու քառասունից ավելի հուշարձանների /այդ թվում 5-հազարամյա ջրատար համակարգի /ջրանցքի/ ոչնչացման փաստի առթիվ:

### **4. Դիմել ՀՀ կառավարությանը՝ պահանջելով.**

1. ա/ Մշակել ծրագիր՝ «Դավայի այգիներ» բնապահպանական և պատմամշակութային համալիրը վերականգնելու, պահպանության հատուկ ռեժիմ սահմանելու, պահպանելու, հողօգտագործողների իրավունքները վերականգնելու, վնասները փոխհատուցելու վերաբերյալ:

բ/ Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 27.03.2003թ. հ.1941-Ա և 11.01.2018թ. հ. 5-Ա, 22.03.2018 հ.308-Ա որոշումները և դրանց հիման վրա ընդունված բոլոր որոշումները՝ որպես ՀՀ օրենսդրությանը և միջազգային նորմերին հակասող որոշումներ:

գ) Ստեղծել «Դավայի այգիներ» պատմամշակութային և բնապահպանական համալիր՝ վերականգնելով պատմամշակութային հուշարձանի՝ հատուկ պահպանվող օբյեկտի կարգավիճակը և սահմանելով պահպանության խիստ ռեժիմ:



դ) Փոխհատուցել՝ փոխհատուցում չստացած և/կամ թերի ստացած հողօգտագործողների վնասներն ու փոխհատուցման ենթակա համարժեք գումարները:

ե/ Փոխանցել Դալմայի այգիների 228,34 հա անտառային հողերը «Հայաստան» ՊՈԱԿ-ի հաշվեկշռին:

զ/ Միջոցներ ձեռնարկել՝ կատարելու «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին», «Կլիմայի փոփոխության մասին», «Կենսաբազմազանության մասին», «Անապատացման դեմ պայքարի մասին» «Լանդշաֆտի մասին», «Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիաներով և այլ միջազգային պայամանագրերով Հայաստանի ստանձնած պարտավորությունները:

## **2. Հանձնարարել.**

### **ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ**

ա/ Ստուգումներ իրականացնել Դալմայի այգիներում՝ պարզելու ապօրինի անտառահատումները և ծառահատումները, անտառային և գյուղատնտեսական հողերի օտարման, օգտագործման և վարձակալության օրինականությունը, հողերի դեգրադացիան, հողերի հումուսային վերին շերտի պահպանման պայմանները, բույսերի և կենդանիների պահպանությունը, ջրային տարածքների պահպանությունն ու տարբեր բնույթի թափոններով աղտոտման կանխարգելմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

բ/ Պարտավորեցնել Դալմայի այգիների նոր հողօգտագործողներին գերծ մնալ ցանկացած շինարարական աշխատանք կատարելուց մինչև շրջակա միջավայրի վրա ազդեցության նոր փորձաքննությունները:

գ/ Հրապարակել Դալմայի այգիներում ստուգման փաթեթը, մասնավորապես, ստուգման ակտի պատճենը, կամ ամբողջական բովանդակությունը, իրավախախտման արձանագրությունը, ստուգման արդյունքում տրված հանձնարարականները, այլ գերատեսչություններին ներկայացված միջնորդագրերը կամ առաջարկությունները, շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկները բոլոր բաղադրիչներով:

### **ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԴԵՆՉԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ**

ա/ Ստուգումներ իրականացնել Դալմայի այգիներում՝ պարզելու հողերի օտարման, օգտագործման և վարձակալության օրինականությունը, քաղաքաշինական նորմերի

և տեխնիկական անվտանգության պատշաճ պահպանումը, տարածքի գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների կատարման ճշտությունն ու օրինականությունը:

բ/ Հրապարակել Դալմայի այգիներում ստուգման փաթեթը, մասնավորապես, ստուգման ակտի պատճենը, կամ ամբողջական բովանդակությունը, իրավախախտման արձանագրությունը, ստուգման արդյունքում տրված հանձնարարականները, այլ գերատեսչություններին ներկայացված միջնորդագրերը կամ առաջարկությունները, պետությանը և քաղաքացիներին պատճառված վնասի հաշվարկները բոլոր բաղադրիչներով:

### **ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ**

ա/ Ներառել «Դալմայի այգիներ»-ը որպես մեկ ամբողջական հուշարձանախումբ ՀՀ պատմամշակութային հուշարձանների ցանկում:

բ/ Ճշտել «Դալմայի այգիներ» հուշարձանախմբի յուրաքանչյուր հուշարձանի զբաղեցրած տարածքի սահմանները, քարտեզագրել այն, հաշվառել դրանք և տալ հաշվառման փաստաթղթեր /վկայագրեր/:

գ/ Մշակել և իրականացնել միջոցառումներ «Դալմայի այգիներ» հուշարձանախմբի պահպանության և հանրությանը հայտնի դարձնելու ուղղությամբ:

դ/ Իրականացնել Դալմայի այգիների տարածքում հնագիտական պեղումներ՝ նոր հուշարձանների բացահայտման նպատակով:

### **ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ**

ա/ Ուժը կորցրած ճանաչել 09.01.2019թ./01.09.18թ./ հ.ԲՓ-01 պետական փորձաքննական եզրակացությունը:

բ/ Ուժը կորցրած ճանաչել 22.02.2019. հ.ԲՓ-07 պետական փորձաքննական եզրակացությունը:

### **«ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-ԻՆ**

ա/ Ընդունել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հաշվեկշռին Դալմայի այգիների 228,34 հա անտառային հողերը, գրանցել այն ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

բ/ Անտառապատել Դալմայի այգիների 228,34 հա տարածքը, իրականացնել այդ ծառերի խնամքն ու պահպանությունը:

գ/ Քարտեզագրել Դալմայի այգու անտառային հողերը և վերացնել դրանց վերաբերյալ կադաստրային տվյալներում տեղ գտած անճշտությունները ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ համատեղ:

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ**

ա/ Իրականացնել իրավական հսկողություն Երևանի քաղաքապետարանի գործունեության նկատմամբ՝ Դավմայի այգիների հողատարածքները օտարելու, վարձակալության հանձնելու վերաբերյալ որոշումների օրինականությունը ստուգելու նպատակով և միջոցներ ձեռնարկել անօրինական որոշումները ուժը կորցրած ճանաչելու համար:

**ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ.**

ա/ Ստուգել Դավմայի այգիների տարածքում կատարված կառույցների սեյսմակայունությունը, տեխնիկական անվտանգությունը, գրունտի ամրությունը, ստորգետնյա ջրերի առկայությունը, հոսքը և այլ տեխնիկական անվտանգության հանգամանքներ:

**ՀՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ**

ա/ Վերացնել Դավմայի այգիների անտառային հողերի վերաբերյալ կադաստրային տվյալներում տեղ գտած անճշտությունները և կատարել պետական գրանցում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ**

ա/ Ուժը կորցրած ճանաչել Երևանի ավագանու 13.01.18թ. հ.119-Ա և Երևանի քաղաքապետի 14.02.18թ. 470-Ա որոշումները:

բ/ Ուժը կորցրած ճանաչել Մոնթե Մելքոնյան փողոց հ.44, բնակելի հասարակական շենքերով թաղամասի թիվ 1-ից թիվ 6 բնակելի մասնաշենքերի կառուցման 20.08.2019թ. հ.01/18-67455 1001 և Մոնթե Մելքոնյան 31 հասցեում Արտադրական շինություններ-արտադրական օժանդակ շինության կառուցման 14.08.2019 հ. 01/18-Հ-401-116, Մոնթե Մելքոնյան փ. 31, Հասարակական շինություններ-հասարակական շինության կառուցում, 25.02.2019թ. հ.01/18-10293-156 շինարարական թույլտվությունները:

գ/ Կասեցնել բոլոր օբյեկտների շինարարությունը Դավմայի այգիներում:

դ/ Փոխանցել Դավմայի այգիների 228,34 հա անտառային հողերը «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հաշվեկշռին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման  
ենթակա չէ:

Դատավորներ՝

Ն.Վարդանյան

Ի.Զարաֆյան

Հ.Խառատյան

Թ.Ենոքյան

*[Handwritten signatures in Armenian script]*